# ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑՈՒ ԱՎԱՆԴԱԶՐՈՒՅՑԻ ՍԻՍԱԿ-ԱՌԱՆՅԱՆ ՃՅՈՒՂԻ «ՆՈՐԱԳՈՒՅՆ ՔՆՆԱԴԱՏՈՒԹՅԱՆ» ՍՆԱՆԿՈՒԹՅՈՒՆԸ

ԷԴՈՒԱՐԴ ԴԱՆԻԵԼՅԱՆ

*Թվում էր՝ Մովսես Խորենացու (V դ.) «Պատմութիւն Հայոց»-ի հանդեպ «գերքննադատությունն» իրեն սպառել է[1]: Սակայն Հենրիկ Սվազյանը վերջերս հայտարարեց, որ Սիսակ-Առանյան զրույցը «հորինել» է Պատմահայրը և, «Առան անվան ծագման ժամանակաշրջանը որոշելով V–VI դարերով», եզրակացրեց. «Սիսակ-Առանյան զրույցը բուն ավանդության մեջ ներմուծված հետագայի ստեղծագործություն է... Հարմա-Արամ հաջորդականությունը ընդմիջվում է Սիսակի մասին պատմությամբ... Նրա բացակայությունը Անանունի մոտ, բայց առկայությունը խորենացիական տարբերակում լիակատար հիմք է տալիս արձանագրելու, որ խնդրո առարկա զրույցը հորինվել է և ավանդության մեջ ավելացվել է իր իսկ՝ Մովսես Խորենացու կողմից իր նշանավոր «Հայոց պատմությունը» գրելիս... Նա V դ. վերջերին կամ VI դ. սկզբներին հյուսում է ներկայիս զրույցը»[2]:*

*Անանունի հետ համեմատելով, Հ. Սվազյանը Պատմահոր երկին վերագրել է հավելում-ընդմիջարկումներ[3] ու, անհիմն «խմբագրմամբ» արձատելով*

---

[1] *Ա. Մ ո ւ շ ե ղ յ ա ն. Մովսես Խորենացու դարը, Երևան, 2007, էջ 5-18:*

[2] *Հ. Ս վ ա զ յ ա ն. Խորենացիական ավանդազրույցի Սիսակ-Առանյան ճյուղը և նրա պատմական ատաղձը.– «Շուշին Հայոց քաղաքակրթության օրրան» գիտաժողովի նյութեր, Երևան, 2007, էջ 12, 15-18: Հակառակ Հ. Սվազյանի պնդման, Սիսակի մասին պատմելուց հետո Պատմահայրը, նշելով «որպէս ասացաք», նկատի ունի «Իսկ Գեղամ յետ ամաց անցանելոյ ծնաւ զՀարմայ յԱրմաւիր...» տողը: Պատմահոր ոճին բնորոշ հիշեցումներ կան Ա և Բ գրքերում [Մ ո վ ս է ս Խ ո ր է ն ա ց ի. Պատմութիւն Հայոց (այսուհետև՝ Մ ո վ ս է ս Խ ո ր է ն ա ց ի), Երևան, 1991, էջ 40–42, 46, 113]:*

[3] *Առանց պատմաբանասիրական հետազոտության Հ. Սվազյանի «եզրահանգումները» սնանկ են և վնասակար խորենացիագիտության համար: Նա պետք է իմանար, որ «Անանունի առեղծվածը դարձել է բանասիրության ամենակնճռոտ հարցերից մեկը» (Պատմութիւն Սեբէոսի, աշխատ. Գ. Աբգարյանի, Երևան, 1979, էջ 386): Անհրաժեշտ է նկատի ունենալ. 1. XIX դ. երկրորդ կեսից Անանունի հատվածը քննարկվել է Մովսես Խորենացուն՝ V դ. հեղինակին, «գերքննադատությամբ» VII-IX դդ. տեղափոխման մթնոլորտում: 2. Ենթադրվել է, որ Անանունի հատվածը ժամանակագրորեն տարբեր գլուխներ է պարունակում: 3. Ըստ մի տեսակետի, Պատմահայրը և Անանունը իրարից անկախ են եղել (*История императора Ираклa, сочинение епископа Себеоса. СПб, 1862, *Ք. Պատկանյանի Առաջաբանը, էջ X), մեկ այլ կարծիքով (*M. B r o s s e t. Rapports sur un voyage archéologique dans la Géorgie et dans l'Arménie. St.-Pétersbourg, 1849, p. 4*) Անանունի գրվածքը սկսվում է հայերի ծագման մասին Խորենացու տեքստի համառոտագրությամբ: Պատմահորը VII դ. հեղինակ համարող Ն. Մառը (*Н. М а р р. К критике истории Моисея Хоренского. СПб, 1898, с. 2*) Անանունի «Հայաստանի նախնական պատմության» («Նախնեացն պատմութիւն») Ա գլուխը ժամանակագրել է V դ. և նշել, որ Պատմահայրը գերադասել է Անանունի վերամշակված գրվածքը (տես՝* Н. М а р р. О начальной истории Армении Анонима. К вопросу об источниках истории Моисея Хоренского.– Византийский Временник, т. 1, 1894, с. 294*): 4. Անանունի հատվածը, ըստ որոշ հետազոտողների, պատկանում է «Սեբեոսի Պատմությանը» [ըստ Ստ. Մալխասյանցի, Սեբեոսը*

*բնագիրը*[4]*, նրա ժամանակաշրջանը V դ. երկարաձգել VI դ.: Նա իր գրքի դրույթները (Սիսակի* աղու *բնութագրից ծագած «Աղուանք» անվան փոխանցումը անտիկ շրջանի սկզբնաղբյուրներին “Albania” տառադարձությամբ կամ՝ Հայոց Արևելից կողմերում պատմականորեն ծագած «Առան» անվան վերածումը աշխարհագրական անվան*[5]*) ժխտեց իր հոդվածում՝ համարելով, որ Սիսակ-Առանյան զրույցը Պատմահայրը «հորինել» է V դ. վերջերին – VI դ. սկզբներին*[6]*:*

---

*օգտվել է Մովսես Խորենացուց (Սեբէոսի եպիսկոպոսի Պատմութիւն, Երևան, 1939, էջ ԻԳ-Ծ)], իսկ, ըստ այլ կարծիքի, ավելի ուշ է մտցվել դրա կազմի մեջ (համաձայն Գ. Աբգարյանի՝ «Խոստաբանության հեղինակը ապրել է V դ.», Անանունի Ա-Զ գլուխները ներկայացնում են «մի հատված, որտեղ պահպանվել են «Սեբեոսի Պատմությունից» առաջ և հետո գրված մի քանի պատմական գրվածքներից քաղվածքներ» (Գ. Ա բ գ ա ր յ ա ն. «Սեբեոսի Պատմությունը» և Անանունի առեղծվածը, Երևան, 1965, էջ 48, 133), իսկ Անանունը «ապրել է Ասողիկից հետո, հավանաբար՝ XI-XII դդ.» (Պատմութիւն Սեբէոսի, 1979, էջ 388): Նշված է, որ «Գ. Աբգարյանն իր այդ կազմած Սեբեոսի պատմության քննական-բաղդատական բնագրում Անանունի հատվածը դարձյալ հրատարակել է Սեբեոսի պատմության հետ, իբրև մեկ ամբողջություն…» (Ե. Տ ե ր - Մ ի ն ա ս յ ա ն, Ս. Հ ա ր ո ւ թ յ ո ւ ն յ ա ն. Պատմագրությունը VII-VIII դդ.– տես՝ Հայ ժողովրդի պատմություն, հ. II, Երևան, 1984, էջ 474-475):*

[4] *Պատմահորը նույնպես անհիմն քննադատել էին նրան կեղծ «գերքննադատությամբ» VIII դ. հեղինակ համարող Գ. Խալաթյանցը («Խորենացին, փոխառնելով Անանունից պատումի միջուկը, այն միայն ընդարձակել է՝ իրենից ներմուծելով որոշ մանրամասներ… և փոփոխություններ».* - Г. Х а л а т ь я н ц. Армянские Аршакиды в “Истории Армении” Моисея Хоренского, ч. I. М., 1903, с. 23, 29) *և Ֆ. Մամեդովան («Խորենացին, օգտվելով Անանունից ընդօրինակված հայ Արշակունիների ցուցակից, ներմուծել է ստեղծագործական փոփոխություններ».–* Ф. М а м е д о в а. Политическая история и историческая география Кавказской Албании. Баку, 1986, с. 47, 185*): Սակայն այսպիսի անհեթեթ քննադատությունը հերքվում է հենց Անանունի հատվածի Բ և հատկապես Գ գլուխների Արշակունիներին վերաբերող տեղեկությամբ. «Արդ՝ թէ պիտոյ է քեզ, ով ընթերցասէր, երկրորդեցից ի պատմագրացն Մովսիսի Խորենացւոյ եւ Ստեփանոսի Տարաւնացւոյ, հաւաստի եւ ճշմարիտ մատենագրաց՝ զորդի ի հաւրէ ճանաչել» (Ս ե բ է ո ս, 1979, էջ 53–55), ըստ որի, այս խնդրում սկզբնաղբյուրներից առաջինը նշված է Պատմահոր երկը՝ Արշակ Մեծի կամ Քաջի կողմից իր եղբորը՝ Վաղարշակին, Հայոց աշխարհում թագավորեցնելու կապակցությամբ (Մ ո վ ս է ս Խ ո ր ե ն ա ց ի, էջ 15, 28, 102, 104):*

[5] *Հ. Ս վ ա զ յ ա ն. Աղվանից աշխարհի պատմություն, Երևան, 2006, էջ 7, 51-52, 54:*

[6] *Հ. Ս վ ա զ յ ա ն. Խորենացիական ավանդազրույցի..., էջ 19: Այս խնդրին կեղծ «գերքննադատությամբ» մոտեցող Ռ. Թոմսոնը, Անանունի հատվածի առաջին երկու գլուխները համարելով նախորդած Մովսես Խորենացուն, գրել է. «Հայաստանին վերաբերող արխիվային նյութի վերագրումը Մովսեսի կողմից առասպելական Մար Աբասին, ընդամենը գրական հնարք է»: Մովսես Խորենացուն նա VIII դար է «տեղափոխել» պատմական իրողության հետ բացարձակապես կապ չունեցող սխալ փաստարկմամբ, իբրև թե «մահմեդականության տիրապետության... ժամանակը հասուն էր հայկական անհատականության ձևակերպումով...»* (Moses Khorenats‘i. History of the Armenians. Transl. and Commentary on the Literary Sources by R. W. Thomson. Revised edition, Ann Arbor, 2006, p. 54–55, 60)*: Եվ այսպես ասվում է Արաբական խալիֆաթի դաժան տիրապետության ժամանակաշրջանի մասին, երբ բազում հայ նախարարներին՝ Նախիջևանի և Խրամի եկեղեցիներում խալիֆայության դահիճների կողմից հրկիզելու տարին հենց արաբական աղբյուրներում անվանվեց «Կրակի տարի» (705 թ.): Դարը լի էր հայ ժողովրդի ապստամբություններով ընդդեմ նվաճողների կեղեքումների, բռնաճնշումների և կրոնական հալածանքների: Իսկ հայկական ազգային անհատականությունը հազարամյակներ առաջ արդեն կայացած և հայտնի իրողություն էր, որի վառ խորհրդանիշն է Պատմահոր խոսքը. «Միրեմ կոչել այսպէս ըստ քաջութեան - Հայկ, Արամ, Տիգրան. քանզի ըստ քաջացն՝ ազգ քաջք» (Մ ո վ ս է ս Խ ո ր ե ն ա ց ի, էջ 85):*

*Հայկյան բուն ավանդությունից է բխում Սիսակ-Առանյան պատումը*[7]*: Այնինչ «հայեցակարգային» շրջադարձով Հ. Սվազյանը գրեց իր նյութը, նշելով, որ 460 էջանոց գիրք է գրախոսում, սակայն, փաստորեն, միայն 8 էջից քաղվածքներ է «մեկնել», իբրև թե՝ «Աղվանքի պատմության մի քանի… անընդունելի մտքերը հարկադրեցին… փորձել պարզություն մտցնել առանձնապես այն խնդիրներում, որոնք վաղուց է, ինչ դարձել են հայ և ադրբեջանցի հեղինակների բանավեճերի նյութ»*[8]*:*

*Հայկական լեռնաշխարհը հայ ժողովրդի բնօրրանն է. այս հայեցակարգով գրել եմ «Գանձասարի պատմությունը», որի հիմնադրույթներից մեկի համաձայն՝* «Մովսես Խորենացու «Պատմութիւն Հայոց»-ի Երկրորդ գրքի հաղորդման համադրությունը նրա Առաջին գրքի համապատասխան նյութի հետ՝ ցույց է տալիս, որ դրանցում մի քանի պատմական շերտեր են առկա, որոնք հայոց պատմության հայեցակարգային ընկալումների լույսի տակ Արցախ-Ուտիքյան աշխարհի և բուն Աղվանքի պատմությունից բխող հարցերի որոշ շաղկապումների արգասիք են»*[9]*:*

*Հ. Սվազյանը, չընկալելով, որ այստեղ խոսքը հնագույն ժամանակներից Հայոց պետականության ազդեցության ոլորտների տարածման մասին է, գրել է. «Բերելով Խորենացու համապատասխան հաղորդումը… «պարզելով», որ… խոսքը Սիսական նախարարական տոհմից սերած և Առանի գլխավորած հայկական նախարարական տոհմի հաստատման մասին է», նա անսպասելիորեն եզրակացնում է. «Ըստ Մովսես Խորենացու՝ Կուրի ձախափնյակում գտնվող «բուն Աղուանք» անունով տարածքի կուսակալ նշանակված նախարարական տոհմը սերել է Հայկազունի Սիսական տոհմից», որը ոչինչ այլ բան չի նշանակում, քան այն, որ բուն Աղվանքի առաջին տիրակալը եղել է Առանը»*[10]*: Հ. Սվազյանը անտեսել է, որ այդ նախադասությունում Առանին չեմ հիշատակել, իսկ «բուն Աղուանքը» չակերտների մեջ է*[11]*, նկատի ունենալով Մովսես Խորենացու երկի պատմական շերտերի համատեքստում՝ «Աղուանք» հասկացության ընդգրկմամբ, Հայկական լեռնաշխարհից Հայկազուն-Սիսակյան տոհմի ազդեցության տարածումը դեպի Կուրի ձախափնյակ*[12]*:*

*Ըստ Պատմահոր պահպանած տեղեկության («…զգունդն որ ի Սիսակայ, որ ժառանգեաց զդաշտն Աղուանից եւ զլեռնակողմն նորին դաշտի, ի գետոյն Երասխայ մինչեւ ցամուրն որ ասի Հնարակերտ. եւ աշխարհն յանուն քաղցրութեան բարուց նորա*

---

[7] *Մ. Չ ա մ չ ե ա ն ց. Պատմութիւն Հայոց, հ. Ա, Վենետիկ, 1784, էջ 71 (Երևան, 1984), Ղ. Ա լ ի շ ա ն. Սիսական, Վենետիկ, 1893, էջ 6, 9, Բ. Ո ւ լ ո ւ բ ա բ յ ա ն. Դրվագներ Հայոց Արևելից կողմանց պատմության (V-VII դդ.), Երևան, 1961, էջ 47,* Г. М. Г р и г о р я н. Очерки истории Сюника IX–XV вв. Ереван, 1990, с. 17–20.

[8] *Հ. Ս վ ա զ յ ա ն. Է. Լ. Դանիելյան, Գանձասարի պատմություն, Երևան, 2005, 460 էջ, ՊԲՀ, 2007, N 3, էջ 236 (այսուհետև՝ «Գրախոսություն»):*

[9] *Է. Դ ա ն ի ե լ յ ա ն. Գանձասարի պատմություն, Երևան, 2005, էջ 38, այս և հետագա մեջբերումների ընդգծումներն իմն են:*

[10] *«Գրախոսություն», էջ 236: Իմ գիրքը արևելահայերեն, դասական ուղղագրությամբ է տպագրվել, իսկ ըստ գրախոսի՝ այն գրված է «արևմտահայ ուղղագրությամբ» (նույն տեղում, ծան. 1):*

[11] *Իսկ որոշակի իմաստով այն առանց չակերտների է, օրինակ՝ «Հայոց աշխարհից դեպի բուն Աղուանք քրիստոնեության տարածման մասին ավանդությունը» (Է. Դ ա ն ի ե լ յ ա ն. նշվ. աշխ., էջ 14):*

[12] *Նույն տեղում, էջ 38-46: Իմ գրքում* Հայկազունի, *այսուհետև՝* Հայկազուն:

*(Սիսակի* – Է. Դ.*) անուանեցաւ Աղուանք. զի աղու ձայնէին զնա»*[13]*)՝ Կուրի աջափնյա դաշտի առումով հայկական ծագմամբ* Աղուանք *անվանումը բնութագրական, այլ ոչ թե էթնիկական իմաստ էր պարունակում: Իսկ ձախափնյակում այն հանդես եկավ որպես երկրանուն «աշխարհ Աղբանիա, այսինքն՝ Աղուանք... զբուն աշխարհն Աղուանից որ ընդ մէջս է մեծի գետոյս Կուրայ եւ Կովկաս լերինն»*[14]*:*

*«Առանի բուն Աղվանքում տիրակալ լինելու» «միտքը» Հ. Սվազյանի թյուր մեկնության արդյունքն է: Ինչո՞վ է այն հիմնավորվում, եթե «Գանձասարի պատմությունում», ի շարունակություն 38-րդ էջի, եզրակացրել եմ.* «Այստեղից պարզ երևում է, որ խոսքը Կուրի աջափնյակի մասին է, այսինքն Ուտիքի և Արցախի... Հայկական նահանգները իրենց բնիկ հիմքի վրա զարգացումներ էին ապրել, որոնք բխելով ընդհանուր համահայկական քաղաքական և հոգևոր ընթացքներից, Արցախում և Ուտիքում հանգեցրել էին Հայկազունի արքայատոհմի՝ Առան անվան հետ կապվող ճյուղի բարձրացմանը[15]... Ըստ Մովսես Խորենացու՝ Հայկազունի Սիսակյան տոհմից ծագել է Կուրի աջափնյակում՝ Արցախում և Ուտիքում գահակալած Առանի ճյուղը: Պատմահայրը գրել է. «Եւ ի սորա (Սիսակ – *Է. Դ.*) ծննդոց այս Առան անուանի եւ քաջ կարգեցաւ կողմնակալ բիւրաւոր ի Պարթեւէն Վաղարշակայ: Ի սորա զաւակաց ասեն սերեալ զազգն Ուտէացւոց եւ Գարդմանացւոց եւ Ծաւդէացւոց եւ Գարգարացւոց իշխանութիւնն»[16]*:*

*Հ. Սվազյանը գրել է. «Աշխարհագրական առումով հայոց հյուսիսարևելյան կողմերը, ըստ Խորենացու, կոչվել է նաև «Աղուանք», որը բուն Աղունքից տարբերելու համար, դեռևս XVIII դարում, Մխիթարյան միաբանության անդամ հայր Միքայել Չամչյանն անվանակոչել է «Աղուանք Հայոց», որն ընդունվել և Աղվանքի պատմությամբ զբաղվող հայ մասնագետների կողմից գործածվում է Ուտիքի ու Արցախի միացյալ տարածքի համար որպես երկրամասին տրվող «Հայոց Արևելից կողմանք», «Հյուսիսարևելյան կողմանք» կամ «Խորին աշխարհ Հայոց» երկրանուններից մեկը»*[17]*: Հ. Սվազյանը չի նկատել, որ Մ. Չամչյանն* Աղուանք Հայոցը *ներկայացրել է Հայկազուն-Սի-*

---

[13] *Մ ո վ ս է ս Խ ո ր ե ն ա ց ի, էջ 113: Ըստ Ա. Հակոբյանի՝ «եթե շարունակել Խորենացու մտքի ընթացքը, կհետևի, որ «Աղուանք» անվանումը ձախափնյակ է տեղափոխվել հենց աջափնյակից (և ոչ թե հակառակը, ինչպես իրականում է)» (*А. А к о п я н. Албания–Алуанк в греко-латинских и древнеармянских источниках. Ереван, 1987, с. 146*): Խնդրին մոտենալով Կուրի աջափնյա դաշտավայրի առումով, հնարավոր էր անվան տարածումը ձախափնյակում:*

[14] *Ս. Ե ր ե մ յ ա ն. Հայաստանը ըստ «Աշխարհացույց»-ի, Երևան, 1963, էջ 105:*

[15] *Ըստ Բ. Ուլուբաբյանի, «Այս տոհմի ակունքում Մովսես Խորենացու հիշած Առանն է եղել՝ Հայկ նահապետից սերված Սիսակի ժառանգներից մեկը: Դրանով իսկ «Աղվանքի պատմությունը» տոհմը ճանաչում էր՝ որպես «գնախնական ազգն Հայկազնեանց՝ Եռանշահիկս (Առանշահիկս)» (Մ ո վ ս է ս Կ ա ղ ա ն կ ա տ ո ւ ա ց ի. Պատմութիւն Աղուանից աշխարհի (այսուհետև՝ Մ ո վ ս է ս Կ ա ղ ա ն կ ա տ ո ւ ա ց ի), Երևան, 1983, էջ 172), «ի զարմից Հայկայ՝ յազգականութենէն Առանայ» (Կ ի ր ա կ ո ս Գ ա ն ձ ա կ ե ց ի. Պատմութիւն Հայոց (այսուհետև՝ Կ ի ր ա կ ո ս Գ ա ն ձ ա կ ե ց ի), Երևան, 1961, էջ 193, Բ. Ո ւ լ ո ւ բ ա բ յ ա ն. Դրվագներ..., էջ 138, Է. Դ ա ն ի ե լ յ ա ն. նշվ. աշխ., էջ 38):*

[16] *Մ ո վ ս է ս Խ ո ր ե ն ա ց ի, էջ 113: Է. Դ ա ն ի ե լ յ ա ն. նշվ. աշխ., էջ 39-41: Պատմահոր բնագրում պետք է լիներ «Գուգարացւոց» (հմմտ. Մ ո վ ս է ս Խ ո ր ե ն ա ց ի, էջ 114, 340): Տե՛ս նաև Բ. Ո ւ լ ո ւ բ ա բ յ ա ն. նշվ. աշխ., էջ 48, Հ. Հ ա մ բ ա ր յ ա ն. Գարգարացիք թե Գուգարացիք.– Հանդես ամսօրյա, 1910, -10, էջ 241–242:*

[17] *«Գրախոսություն», էջ 238: Հ. Ս վ ա զ յ ա ն. Աղվանից աշխարհի..., էջ 223, ծան. 2:*

*սակյանների իշխանության հնում դեպի արևելք ծավալման, ինչպես նաև հետագայում՝ «կաթողիկոսարանն Աղուանից ի Գանձասար» հասկացության տարածքային ընդգրկման մասին պատկերացումների շաղկապմամբ: Մ. Չամչյանը գրել է. «Աղուանից աշխարհ, կրկին առմամբ յիշատակի սա ի գիրս մեր: Մի փոխանակ այնր աշխարհի՝որ է ընդ մէջ Կուր գետոյ և Կասպից ծովու՝մինչև ի Դարբանդ. և սա կոչի* Աղուանք Շիրուանայ, *կամ Շիրուան: Երկրորդ՝ի մասնաւորի փոխանակ այնր մասին Հայաստանի՝որ պարունակէ յինքեան զերիս աշխարհս. այսինքն՝զՈւտի, զԱրցախ և զՓայտակարան, և զմասն ինչ յայնկոյս Կուր գետոյ. և սա կոչի յատկապէս՝*Աղուանք Հայոց. *ուր է և կաթողիկոսարանն Աղուանից ի Գանձասար»*[18]*:* Աղուանք Շիրուանայ *ասելով, Մ. Չամչյանը նկատի ունի Շիրվանը և մերձկասպյան շրջանները՝ Կուրի ստորին հոսանքից մինչև Դերբենդ, իսկ* Աղուանք Հայոց *՝ Կուրի աջափնյա կողմը և «մասն ինչ յայնկոյս*[19] *Կուր գետոյ», այսինքն՝ նաև Կուրի մյուս կողմի (իմա՝ բուն Աղուանք) մի մասը: Մ. Չամչյանը գրել է, որ Սիսակը «առաւել ևս ընդարձակեալ զտէրութիւն իւր ընդ արևելս մինչև ի գետն Կուր՝նուաճեաց ընդ իւրև զբնակեալսն յայնոսիկ կողմանս. և ըստ ասելոյ ոմանց՝նաև զբնակիչս յայնկոյս գետոյն Կուրայ, մինչև ի սահմանս Կաս-*

---

[18] *Մ. Չ ա մ չ ե ա ն ց. Պատմութիւն Հայոց, հ. Գ, Վենետիկ, 1786, Յանկ, էջ 131 (Երևան, 1984): Կեղծարարության մոլուցքով տարված Ֆ. Մամեդովան գրել է, որ «գիտությանը ոչինչ հայտնի չէ* Աղուանք Շիրուանայ*» մասին (*Ф. М а м е д о в а. *Նշվ. աշխ., էջ 74): Հակառակ այդ կեղծիքի, Մ. Չամչյանի տեսակետի հիմքում այն իրողությունն էր, որ* Աղուանք Հայոց *և* Աղուանք Շիրուանայ *աշխարհագրական միավորները Գանձասարի կաթողիկոսության թեմական տարածքներն էին՝ Հայ Առաքելական եկեղեցու տնօրինության տակ: Այսպես, Շահ Աբբաս II-ի (1642-1666) հրովարտակում (1650 թ.) հիշատակվում է նրա հոր՝ Շահ Սաֆի I-ի (1629-1642) 1634թ. հրամանագիրը, որում մասնավորապես ասված է. «... Շամախիի և* Շիրվանի *հայերը զեկուցեցին այն մասին, որ հին ժամանակներից ի վեր նրանց կաթողիկոսը Ուչքիլիսայինն (Ս. Էջմիածին – Է. Դ.) է եղել...» (տես՝ Մատենադարանի պարսկերեն հրովարտակներ (ՄՊՀ), II, Մատենադարանի պարսկերեն վավերագրերը (ՄՊՎ), I Հրովարտակներ, պրակ երկրորդ (1601-1650 թթ.), կազմեց Հ. Դ. Փափազյան, Երևան, 1959, էջ 147): Շահ Աբբաս II-ի 1652 թ. հրովարտակում մասնավորապես ասվում է՝ «... Գանձակի, Ղարաբաղի ու* Շիրվանի *հայերի կաթողիկոսությունը Օվանես կաթողիկոսի մահից հետո շնորհվել էր ազնվագույն քրիստոնյա Գրիգոր կաթողիկոսին...» (1634-1653) (ՄՊՀ III, ՄՊՎ, Հրովարտակներ, պրակ երրորդ (1652-1731), կազմեց Ք. Պ. Կոստիկյանը, Երևան, 2005, էջ 28): «…Պատուելի Պետրոս (Խանձքեցի – Է. Դ.) կաթուղիկոսն Հայոց Գանձասարու Աթոռոյն… յայտնեաց խնդրագրով թէ՝ ի հնոց հետէ կաթուղիկոսն Հայոց Գանձասարայ, Ղարապաղու,* Շիրուանու *եւ նահանգաց նոցին եւ այլոց ընդհանրապէս մեր է եղել… Վասն որոյ մեք (Շահ Աբբաս II) եւս կաթուղիկոսութիւն Հայոց Գանձասարու, Ղարապաղու,* Շիրվանու *եւ այլոց, շնորհեցաք անքակտելի հրովարտակաւս… եւ դուք այս երկրաց միջի բնակող հայք՝ զյիշեալ Պետրոս կաթուղիկոսն ի ձեզ կաթուղիկոս իմացէք… « (Ս ա ր գ հ ս ա ր ք. Ջ ա լ ա լ ե ա ն ց. Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, մասն Բ, Տփղիս, 1858 էջ 494-495): Ըստ Ամենայն Հայոց կաթողիկոս Յակոբ Դ Ջուղայեցու (1655-1680)՝ «Աղուանից կաթուղիկոսին վիճակն* Շիրուանայ *եւ Գանձակայ… տուեալ են կաթուղիկոսունք Էջմիածնայ ժամանակաւոր, վասն ազատելոյ ի պարտուց զԱթոռն Գանձասարայ…»: Վարդան Օձնեցին հաղորդում է. «զՊետրոս եպիսկոպոս… որ հաստատեցաւ կաթուղիկոս ի Գանձասար հրովարտակաւ Շահ Սէֆու երկրորդի (Սուլեյման, նույն ինքը՝ Շահ Սեֆի կամ Սաֆի II՝ 1666-1694 թթ.), ոչ միայն ի վերայ մասին, այլ՝ բոլոր Աղուանից Գանձակայ, Շաքուայ, Շիրուանայ…» (Պատմութիւն Հայոց. Պատմութիւն նոր քաղաքական եւ եկեղեցական Հայաստան աշխարհի. Մեծի եւ Փոքրուն. աշխատ. նուաստ Վարդան արքեպ. Օձնեցւոյ, սկսեալ ի 1847 ամի ծննդեանն Քրիստոսի եւ աւարտեալ ի 1868 ամի, ի սուրբ Աստուածածնայ վանս Սանահնոյ, Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. N 4331, թ. 10բ-11ա):*

[19] *Հ. Սվազյանը պետք է իմանար, որ «յայնկոյս» նշանակում է «ի միւս կողմն» (Նոր բառգիրք Հայկազեան լեզուի, հ. Բ, Վենետիկ, 1837, էջ 320), իսկ «Կուրից այն կողմ», ձախափնյա տարածքն է:*

*պից ծովուն. որով և աշխարհն այն... անուանեցաւ Աղուանք յերկրորդ անուանէ նորա... «*[20]*:*

*Ըստ Մ. Չամչյանի հայեցակարգի, Հայկյան Գեղամի որդին՝ Սիսակը, Սյունիքի տերը, իր իշխանությունը տարածել էր «ընդ արևելս մինչև ի գետն Կուր», և, «ըստ ասելոյ ոմանց», նաև «նուաճեաց... զբնակիչս յայնկոյս գետոյն Կուրայ, մինչև ի սահմանս Կասպից ծովուն»: Վաղարշակ թագավորն «առ սահմանօք (Հայոց – Է. Դ.) հիւսիսոյ արևելեայ կողմանն մօտ Կուր գետոյ կացոյց կողմնակալ տասն հազարօք զԱռան զայր իմաստուն և քաջ ի ծննդոցն Սիսակայ»*[21]*:*

*Պատմահոր երկում արտացոլվել են տարբեր ժամանակներում հայկական պետականության և մշակութային ազդեցության ընդգրկումները: Հայկյան Արամը (մ. թ. ա. III հազ.) արևմուտքում «իւր թոռեալ զոմն Մշակ անուն յազգէ... և ինքն դառնայ ի Հայս», իսկ արևելքը «յանձնեալ էր ի ձեռն… Սիսակեանցն»: Սիսակյանները, «զգունդն որ ի Սիսակայ», Սիսակյան Առանը «յարևելից կողմանէ, զեզերբ հայկական խօսիցս» աշխարհաշեն գործունեություն էին ծավալել*[22]*:*

*Հայոց պետականության ազդեցության ոլորտում Կուրի ձախափնյակի լինելու մասին է վկայում Պատմահոր՝ Տիգրան Երվանդյանի (մ. թ. ա. VI դ.) և Տիգրան Բ Մեծի (մ. թ. ա. 95–55 թթ.) կերպարների միահյուսմամբ հետևյալ շարադրանքը. «Եւ ժողովէ արքայն Հայոց ի սահմանացն Կապադովկացւոց, և որչափ ընտիրք Վրաց և Աղուանից, և զամենայն ընտիրս Հայոց Մեծաց և Փոքունց»*[23]*:*

*Տիգրանակերտի պաշարման ժամանակ Տիգրան Բ Մեծին ենթակա ուժերի թվում նաև «աղվաններ» են հիշատակվում*[24]*: Ըստ Ստրաբոնի (մ. թ. ա. 64 – մ. թ. 20 թթ.), «Ալբանիան» հարավից՝ Կուր գետով սահմանակից էր Հայաստանին, իսկ «ալբանները... կռվում են թե՛ հետևակ և թե՛ հեծյալ, թեթև և ծանրազեն, ինչպես հայերը»*[25]*:*

---

[20] *Մ. Չ ա մ չ ե ա ն ց. Պատմութիւն Հայոց, հ. Ա, Վենետիկ, 1784, էջ 71: Ըստ Ստեփանոս Օրբէլյանի՝ Վաղարշակը Սիսակյաններին նշանակել էր արքունի բոլոր զորքերի հրամանատար և Հայոց թագավորությունում երկրորդը, և հրամայել պատերազմով դեմ կանգնել «Հոնաց դռանը» (Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի Պատմութիւն Տանն Սիսական (այսուհետև՝ Ս տ ե փ ա ն ո ս Օ ր բ է լ ե ա ն), Մոսկվա, 1861, էջ 9): Ա. Աբրահամյանը, հետևելով Կ. Շահնազարյանցին, նշել է, որ այդ ժամանակներում հոները դեռ այդտեղ չէին հասել և հնում այն կոչվում էր «Հորայ պահակ», «Դուռն Աղուանից» (Ս տ ե փ ա ն ո ս Օ ր բ է լ ե ա ն. Սյունիքի պատմություն, թարգմ., ներած. և ծան. Ա. Ա. Աբրահամյանի, Երևան, 1986, էջ 420, ծան. 75):*

[21] *Մ. Չ ա մ չ ե ա ն ց. Պատմութիւն Հայոց, հ. Ա, էջ 214:*

[22] *Մ ո վ ս է ս Խ ո ր ե ն ա ց ի, էջ 41, 46, 112-113: Հայկի թոռան՝ Կադմոսի սերունդների՝ Հայկազուն Սիսակյանների հետ Հայոց Արևելից կողմերում հիշատակությունն ընդգծում է Ուտիքի և Արցախի Առանի գլխավորած կուսակալության և իշխանական տների բնիկ հայկական ծագումը:*

[23] *Նույն տեղում, էջ 72, 81, 199:*

[24] *Պլուտարքոսի (46–119 թթ.) հաղորդումները* (Plutarch's Lives, with an English translation by B. Perrin, in eleven volumes, vol. 2, London, 1959, Lucullus, XXVI) *հիմք են տվել եզրակացնելու, որ «Ալբանիա»-Աղվանքը եղել է Տիգրան Մեծի լայնածավալ տերության մեջ* (Н. А д о н ц. Армения в эпоху Юстиниана. Ереван, 1971, с. 410), *որպես «ստորադասված վասալական թագավորություններից կամ իշխանություններից « (Հ. Մ ա ն ա ն դ յ ա ն. Տիգրան Երկրորդը և Հռոմը, Երևան, 1940, էջ 113), իսկ «աղվաններն» էլ՝ «կախյալ ազգություններից» (Ռ. Մ ա ն ա ս ե ր յ ա ն. Տիգրան Մեծ. Հայաստանի պայքարը Հռոմի և Պարթևստանի դեմ, Երևան, 1987, էջ 88) մեկը:*

[25] The Geography of Strabo, with an English translation by H. L. Jones, Cambr., Mass., London, in eight volumes, vol. V, 1954, XI, 3, 2; "τὸ δὲ νότιον ποίει Ἀρμενία παρήκουσα...", "Ἀλβανοὶ... ὅμως δὲ καὶ πεζοὶ καὶ ἀφ'

*Այսպիսով, Մեծ Հայքի ազդեցության ոլորտում ձախափնյա «բուն Աղուանքը» նկատի ունենալով՝ ենթադրել եմ Հայկազուն-Սիսակյան տոհմից որևէ կուսակալի նշանակման*[26] *և նրա իրավասության սահմանների տարածման մասին Պատմահոր հաղորդման մեջ արտացոլված պատմական շերտի առկայությունը*[27]*:*

*Կուրի ձախափնյակի կապակցությամբ իմ նշումը ամենևին չի նշանակում, թե խոսքը Առանի (որի վերաբերյալ գրել եմ. «*Հայկազունի Սիսակեան տոհմից ծագել է Կուրի աջափնեակում՝ Արցախում եւ Ուտիքում գահակալած Առանի ճիւղը*») մասին է: Առավել ևս անհեթեթ է կարծել, թե՝ հայ կուսակալը*[28] *դառնում էր օտար ցեղերի «նախահայրը...», ինչպես Հ. Սվազյանը, նենգափոխելով իմ շարադրանքը, գրել է, թե «հեղինակը Կ. Վ. Տրներից ու Ֆ. Մամեդովայից հետո տուրք է տալիս այն կեղծ վարկածին, թե Առանը բուն Աղվանքի առաջին տիրակալն էր և աղվանական ցեղերի նախահայրը՝ աղվանական համարելով նաև նրանից սերված հայկական ծագմամբ չորս ժողովուրդներին...»*[29]*: Հ. Սվազյանի այսպիսի «միտքը» սնանկ է: Իրականում ես գրել եմ.* «Առան» անունը կապված է հնդեվրոպական լեզվական հիմնաշերտի արիական ոլորտների հետ, հանդիսանալով հայ-արիական ընդհանրության արգասիք: Այս տեսակետից՝ Մովսես Խորենացին Հայոց բնաշխարհի արևելյան շրջանների («յարեւելից կողմանէ, զեզերբ հայկական խօսիցս») կապակցությամբ պահպանել է «Առան» անվանաձևը, ինչը վկայում է արիականության հոգևոր ընկալումների տարածման հյուսիս-արևելյան եզրերի մասին»[30]*:*

*Հ. Սվազյանը գրախոսությունում չնայած հիշատակել է «Հայկազուն Սիսակի ժառանգ Առանին Հայոց Հյուսիս-Արևելից կողմերում կուսակալ նշանակելու մասին»*

---

ἵππων ἀγωνίζονται, ψιλοί τε καὶ κατάφρακτοι, καάπερ ᾽Αρμένιοι” *(նույն տեղում, XI, 4, 1 և 4): «Ալբանիա»–բուն Աղվանքի բազմացեղ միջավայրում խոսում էին «26 լեզուներով» (նույն տեղում, XI, 4, 6):*

[26] *Է. Դ ա ն ի ե լ յ ա ն. նշվ. աշխ., էջ 38:*

[27] *Մ. Չամչյանի մեկնությամբ, Սիսակը Կուրի աջափնյակում իր իշխանությունը տարածվելուց հետո «նուաճեաց... զբնակիչս յայնկոյս գետոյն Կուրայ, մինչև ի սահմանս Կասպից ծովուն» (Մ. Չ ա մ չ է ա ն ց. Պատմութիւն Հայոց, հ. Ա, էջ 71):*

[28] *Այսպես, Տիգրան Բ-ը իր տերության մեջ գտնվող Ասորիքում կուսակալ էր նշանակել ծագումով Հայկազուն Բագարատին (Ա. Մ ո ւ շ ե ղ յ ա ն. նշվ. աշխ., էջ 333-341), սակայն դա չի նշանակում, որ ասորիները (սիրիացիները) նրանից էին սերում: Կամ, Ագաթանգեղոսի հաղորդմամբ, Խոսրով Ա-ի դաշնակիցների թվում էր աղվանից զորքը, իսկ Տրդատ Գ-ի օրոք Հայոց թագավորության չորրորդ բդեշխը «ի Մասքթաց կողմանէ» էր (Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց, Տփղիս, 1909, էջ 459): Իրանական ցեղերից «Մասքթաց Արշակունիների թագավորությունը գտնվում էր Կասպից ծովի ափին (Աղվանքի արևելքում) և ընդգրկում էր Չորա (Ճորա) երկիրը» (Ա գ ա թ ա ն գ ե ղ ո ս. Պատմություն Հայոց, աշխարհաբար թարգմ., ներած. և ծան. Ա. Տեր-Ղևոնդյանի, էջ 184, ծան. 53): Ըստ Ագաթանգեղոսի՝ Ս. Գրիգոր Լուսավորիչը արևելքում քարոզության գործը հասցրել էր Մասքթաց սահմանները: Պատմիչի հաղորդումներից հետևում է, որ Կուր գետից արևելք գտնվող բուն Աղուանքը մինչև Ճորա պահակը և Մասքթաց սահմանները եղել է Հայոց աշխարհի հոգևոր և քաղաքական ոլորտներում՝ Հայոց բդեշխի իշխանության տակ: Բ. Ուլուբաբյանը նշել է. «Միասնական հայկական թագավորության պայմաններում նույն Հայոց կաթողիկոսությանն էին ենթարկվում ոչ միայն Մեծ Հայքի հյուսիս-արևելյան նահանգների, այլև բուն Աղվանքի հոգևոր թեմերը» (Բ. Ո ւ լ ո ւ բ ա բ յ ա ն. Խաչենի իշխանությունը X-XVI դդ., Երևան, 1975, էջ 378):*

[29] *«Գրախոսություն», էջ 237-238:*

[30] *Է. Դ ա ն ի ե լ յ ա ն. նշվ. աշխ., էջ 40-41:*

*Մովսես Խորենացու հաղորդումը[31], բայց իր հոդվածում դրա հիմքը՝ «Հայկի սերունդ Սիսակի» և նրա «ժառանգներից Առանի» մասին զրույցը համարելով «ետնամույծ»՝ իբրև թե «մատյան է մտել վերջինիս կազմվելուց հետո»[32], փաստորեն, կտրել է Հայկազունների տոհմաբանության մասին բուն ավանդությունից:*

*Իմ գրքի հիմնադրույթներից է Հայոց բնիկ ծագումնաբանության արտացոլումը Հայկյան բուն ավանդության մեջ: Իսկ Հ. Սվազյանը, ներկայացնելով VI դ. վերջից «նոր անվանակոչված Աղվանքը» ներառող Ուտիքն ու Արցախը՝ «դրանք բնակեցրած ցեղերով՝ ուտիացիներով, գարդմանացիներով, ծավդեացիներով ու գուգարներով»[33], գրել է. «Սիսակ-Առանյան ավանդապատումը պատկերում է Հայոց Արևելից կողմերում բարձրացած վարչա-քաղաքական միավորի նախնական պատմությունը... այն բնակեցնող ժողովուրդներին, վերջիններիս ծագումն ու էթնիկ պատկանելությունը... Այստեղ էլ առասպելականի և իրականի միահյուսումով արտացոլված են հայ ժողովրդի առաջացման... ու հարակից հարցեր»[34]: Ի՞նչ ցեղերի և ժողովուրդների մասին է գրում Հ. Սվազյանը: Հայկական լեռնաշխարհի բնիկ հայ ժողովրդի հայրենիքի արևելյան աշխարհներն են Արցախը և Ուտիքը: Ուստի, ավանդազրույցում «զազգն» տվյալ դեպքում նշանակում է Հայկազուն-Սիսակյան Առանից Արցախում և Ուտիքում սերված տոհմն ու նրա ճյուղերը:*

*Իսկ Կ. Տրների անհիմն պնդմամբ՝ խոսքն «առասպելական հայոց թագավոր Վաղարշակի կողմից», «առասպելական ալբանական նախնի» Առանին «Ալբանիայում կառավարիչ» նշանակվելու մասին է, ինչը նա համարել է մ. թ. I դ. առաջացած առասպել, «որին V դ. ավելացվել է Սիսակի տոհմից նրա ծագելու ցուցումը»[35]: Ֆ. Մամեդովան, նենգափոխելով փաստերը՝ «Ալբանիայի» «անվանադիր նախնի» համարելով Առանին, Կուրը ժխտելով որպես սահման Հայաստանի և «Ալբանիայի» միջև, աջափնյակն էլ ներկայացնելով «ալբանական էթնոսով բնակեցված», կեղծել է պատմությունը՝ գրելով. «Կաղանկատվացու մոտ ոչ մի տվյալ չկա Ալբանիայում՝ Արցախի և Ուտիքի շրջաններում ապրող հայերեն խոսող հայերի մասին…Ալբանները Ադրբեջանի անտիկ և վաղմիջնադարյան մշակույթի գլխավոր ստեղծողներից մեկն էին և ադրբեջանցի ժողովրդի նախնիներից մեկը»[36]: Թուրք-ադրբեջանցի կեղծարարները հորինում և*

---

[31] *«Գրախոսություն», էջ 236:*

[32] *Հ. Ս վ ա զ յ ա ն. Խորենացիական ավանդազրույցի..., էջ 5, 15, 18: Մար Աբասի գիրքը կազմած էր «Նինվեի դիվանից» հայտնաբերված մատյանից քաղված («Այս մատեան հրամանաւ Աղեքսանդրի ի Քաղդէացւոց բարբառոյ փոխեալ ի յոյն, որ ունի զբուն հնոցն և զնախնեացն բանս…») և այլ նյութերից (Մ ո վ ս է ս Խ ո ր է ն ա ց ի, էջ 30-31): Հնում գրված մատյանում անհնար էր V-VI դդ. հավելում կատարել:*

[33] *Հ. Սվազյանը կրկին երկարաձգել է Խորենացու տեղեկության ընդգրկած ժամանակաշրջանը (Հ. Ս վ ա զ յ ա ն. Աղվանից աշխարհի..., էջ 222):*

[34] *Հ. Ս վ ա զ յ ա ն. Խորենացիական ավանդազրույցի…, էջ 10:*

[35] К. В. Т р е в е р. Очерки по истории и культуре Кавказской Албании. IV в. до н. э.– VII в. н. э. М.–Л., 1959, с. 46. *Հ. Սվազյանը, «գերազանցելով» Կ. Տրներին, ավանդազրույցի «հորինումը» հասցրել է մինչև VI դ.:*

[36] Ф. М а м е д о в а. *Նշվ. աշխ., էջ 75, 78-79, 105-106, 124, 145, 246.*

*հնացում են «ալբանների»*[37] *հետ մարդաբանական, էթնիկական և մշակութային ոչ մի կապ չունեցող, շատ ուշ ժամանակների եկվոր միջինասիական թյուրքալեզու՝ թալանով ու ավերածություններով զբաղվող օղուզական քոչվոր ցեղերից առաջացած ու խորհրդային շրջանից «ադրբեջանցի» հորջորջվածների «պատմությունը»:*

*Մինչ իմ գիրքը զրպարտելը Հ. Սվազյանը պարտավոր էր ծանոթանալ նրա հայագիտական հիմքին: Հայոց աշխարհի ազդեցության* բուն Աղուանքում *տարածման հաջորդ փուլը դիտարկել եմ քրիստոնեական դարաշրջանում. «…*Մովսես Կաղանկատվացու հաղորդած աւանդությունը ս. Եղիշայի մասին, փաստորեն, հյուսված է Հայ Առաքելական եկեղեցու՝ ս. Թադեոս առաքյալի քարոզությամբ սկզբնավորման ավանդությունից… «Աղուանից եկեղեցու» աւելի ուշ հիմնվելն ուներ իր պատճառները, որոնցից էր բուն Աղուանքի էթնիկական բազմատարրությունը: Էթնիկապես միատարր Հայաստանն էր, որ Հայ Առաքելական եկեղեցու նվիրապետության միջոցով, առաջնային դեր խաղաց հետագա դարերում բուն Աղուանքը քրիստոնյա աշխարհի ոլորտն ընդգրկելու գործում»*[38]*:*

*Միսակ-Առանյան պատումի խորքային շերտերի՝ Հայկազունների ամբողջական ազգաբանության հիման վրա գրել եմ. «*Վաչագան Բարեպաշտի ժամանակ (V դարի 80-ական թթ. – VI դ. առաջին կես), Արցախ-Ուտիքյան աշխարհում հայոց թագավորության վերականգնման հետ մեկտեղ բարգավաճեցին նաև Հայ Առաքելական եկեղեցու արևելյան եպիսկոպոսությունները, որոնց հոգևոր ոլորտներում էր նաև բուն Աղուանքը»*[39]*:*

*Բ. Ուլուբաբյանի՝ Հայկազուն-Միսակյան Առանշահիկների հարստության մասին տեսակետը*[40] *չընդունելով և Հայոց Արևելից կողմանց պատմությունը կեղծելով, Ֆ. Մամեդովան գրել է, թե Վաչագանը «ալբանական Արշակունիների ճյուղի վերջին ներկայացուցիչն» էր, որի «թագավորությունը Ալբանիայի քաղաքական և մշակութա-կրոնական վերածնունդն էր»*[41]*: Հ. Սվազյանը նման հերյուրանքներին հակահարված տա-*

---

[37] *Թուրք-ադրբեջանցի կեղծարարների ստահոդ զառանցանքի խիստ քննադատությունը տես՝* А. М у ш е г я н. Псевдоалбанская литература и ее апологеты.– *«Լրաբեր հասարակական գիտությունների», 1989, № 8, էջ 31:*

[38] *Է. Դ ա ն ի ե լ յ ա ն. նշվ. աշխ., էջ 18: «Աղուանից եկեղեցի» արտահայտությունը չակերտների մեջ եմ բերել, նկատի ունենալով, որ հայկական միջնադարյան սկզբնաղբյուրներում «...եկեղեցւոյն Աղուանից» (Կ ո ր յ ո ւ ն. Վարք Մաշտոցի, Երևան, 1981, էջ 120, հմմտ. Մ ո վ ս ե ս Կ ա ղ ա ն կ ա տ ո ւ ա ց ի, էջ 305–309) հիմնականում հիշատակվում է որպես հայրապետություն կամ կաթողիկոսություն՝ Հայ Առաքելական եկեղեցու նվիրապետական համակարգում: Այդ մասին է վկայում նաև այն փաստը, որ Աղուանից հայրապետությունում ստեղծված երեք կանոնախմբերը՝ հայոց թագավոր Վաչագան Բարեպաշտի հրավիրած Աղուենի ժողովի ընդունած «Սահմանադրութիւն կանոնական ի Վաչագանայ Աղուանից արքայի եղեալ ի ժողովն, որ յԱղու[է]նս եղեւ» (Կանոնագիրք Հայոց, հ. Բ, աշխատ. Վ. Հակոբյանի, Երևան, 1971, էջ 91-100), «Աբրահամու Մամիկոնեից եպիսկոպոսի առ Վաչական…» և Սիմեոն Աղուանից կաթողիկոսի կանոնները ընդունել է Հայ Առաքելական եկեղեցին (Կանոնագիրք Հայոց, ձեռագրերի համեմատությամբ, խմբեց, Արսեն Ղլտճեան, Թիֆլիզ, 1913, էջ 192-204):*

[39] *Նույն տեղում, էջ 46:*

[40] *Բ. Ո ւ լ ո ւ բ ա բ յ ա ն, Դրվագներ..., էջ 129:*

[41] Ф. М а м е д о в а. *Նշվ. աշխ., էջ 172, 193, 241:*

*լու փոխարեն[42], Վաչագան Գ Բարեպաշտին ծագումով Արշակունի է նշել («նորանշանակ «թագավորը» իշխանության գլուխ է անցնում որպես մարզպանության ողջ տարածքի գերագույն գլխավոր սյուզերեն»[43]), իսկ իմ տեսակետն էլ քննադատելով, գրել է. «Է. Դանիելյանի եզրահանգումներում կան նաև այլ կարգի անճշտություններ կապված, օրինակ Վաչագան Բարեպաշտի դինաստիական պատկանելության ու գործունեության հետ», «խոստանալով» հետագայում անդրադառնալ դրանց[44]: Հակառակ Ֆ. Մամեդովայի և Հ. Սվազյանի կարծիքների, հենվելով Կաղանկատվացու հաղորդումների վրա, ընդունել եմ Բ. Ուլուբաբյանի տեսակետը, որ Հայոց Արևելից կողմերը՝ Հայկազուն-Սիսակյան Առանշահիկ տոհմից սերած Վաչագան Բարեպաշտի թագավորության կորիզն էին[45] («Արցախայ ամուր աշխարհ»), որի ազդեցությունը տարածվում էր նաև Կամբեճանի և բուն Աղուանքի որոշ մասի վրա[46]: Այդ նաև արտացոլվել է Վաչագանի «բարեպաշտ Աղուանից արքա» տիտղոսում ու նրա հրավիրած Աղուենի ժողովի մասնակիցների ցուցակում աջափնյա ու ձախափնյա եպիսկոպոսությունների ու վայրերի հիշատակությունում[47]:*

*Հ. Սվազյանը գրել է. «Աղվանից մարզպանության կազմավորումը... ուղեկցվեց հայկական նահանգներ Ուտիքի ու Արցախի Մեծ Հայքից անջատմամբ և նորաստեղծ վարչաքաղաքական միավորի կազմում ընդգրկմամբ: Է. Դանիելյանն անդրադարձել է նաև այս հարցերին... Նա հընթացս մեղադրել է մեզ այն բանում, որ նշելով Ն. Ադոնցի կարծիքը մենք հղում ենք կատարում նրա գրքի մի էջի վրա, որտեղ չկա մեզ հետաքրքրող իրադարձությունների համար նրան վերագրած տարեթիվը՝ 387 թ... Իսկ Է. Դանիելյանը պնդում է, թե իբր ամեն անգամ, խոսելով «մասնատված տարածքների» և Հայաստանի մարզպանական ժամանակաշրջանի մասին, Ն. Ադոնցը նկատի է ունեցել 428 թ., այլ ոչ թե 387 թ.: Մերկապարանոց հայտարարություն: Հետազոտողը Ն. Ադոնցին վերագրում է մի միտք, որը նա երբեք չի ունեցել»[48]: Հ. Սվազյանը Ն. Ադոնցի աշ-*

---

[42] *Հ. Սվազյանը Ֆ. Մամեդովայի «կարծիքի» կապակցությամբ միայն ընդհանուր նշում է կատարել. «Ուսումնասիրություններում այս փոփոխությունը դիտվել է իբրև ընդհանրապես մարզպանության վերացում և Աղվանից թագավորության վերականգնում» (Հ. Ս վ ա զ յ ա ն. Աղվանից աշխարհի..., էջ 211):*

[43] *Նույն տեղում, էջ 211-212:*

[44] *Միևնույն ժամանակ Հ. Սվազյանն ինձ մեղադրել է «օգտագործած գրականության արժևորման հարցում ցուցաբերած սուբյեկտիվ մոտեցման» համար («Գրախոսություն», էջ 245): Ի դեպ, օգտագործված գրականության շարքում քննարկել եմ Հ. Սվազյանի հինգ հոդվածները:*

[45] *Բ. Ո ւ լ ո ւ բ ա բ յ ա ն. Դրվագներ..., էջ 31, 129:*

[46] *Է. Դ ա ն ի ե լ յ ա ն. նշվ. աշխ., էջ 32-46:*

[47] *Մ ո վ ս է ս Կ ա ղ ա ն կ ա տ ո ւ ա ց ի, էջ 42, 47, 51, 89, 90: Կանոնագիրք Հայոց, հ. Բ, էջ 91-92:*

[48] *Հ. Սվազյանը գրել է. «Ըստ մեր ընդդիմախոսի՝ երկու պետությունները, որոնք բաժանել էին Հայաստանը միմյանց միջև, Արևելահռոմեական կայսրությունն էր ու Սասանյան Իրանը: Ճիշտ չէ: Արևելահռոմեական կայսրությունը պատմության ասպարեզում հայտնվում է միայն 395 թ. հետո՝ Հռոմեական կայսրության երկու մասի բաժանվելու հետևանքով, Բյուզանդիա անվամբ, իսկ Հայաստանը բաժանվել է 387 թ. Հռոմեական կայսրության և Սասանյան Իրանի միջև» («Գրախոսություն», էջ 238): Ըստ Հր. Բարթիկյանի՝ «Արևելահռոմեական կայսրության և Պարսկաստանի միջև կնքված հաշտության պայմանագրի համաձայն 387 թ. Հայաստանի 1/5 մասն անցել էր Բյուզանդիայի տիրապետության տակ» (Հայ ժողովրդի պատմություն, հ. Բ, Երևան, 1984, էջ 216): «Բյուզանդական կայսրություն» հատորում կարդում ենք. «Արևելյան Հռոմեական կայսրության ձևավորումը. 330-717 թթ.», «330 թ.՝ Բյուզանդական պատմության սկիզբը», իսկ «Բյուզանդական կայսրերի» ցուցակում առաջինը Կոստանդիանոս Ա-ի*

*խատության հետևյալ տողերից՝ «Մարզպանական Հայաստանն իր մեծությամբ զգալիորեն զիջում էր թագավորական ժամանակաշրջանի Հայաստանին: Նրա սահմաններից դուրս էր մնացել ծայրամասային հողերի գոտին... Նշված հողերի անջատումը Հայաստանից թվագրվում է IV հարյուրամյակի երկրորդ կեսին Արշակի անկման ժամանակաշրջանով՝ Հայաստանի բաժանման նախօրեին»*[49]*, եզրակացրել է. «Ահա այն հիմքերը, որոնք թույլ են տվել 387 թ. նշել որպես Ն. Ադոնցի ցույց տված տարեթիվ...»*[50]*: Այնինչ այդ հատվածից առաջ Ն. Ադոնցը գրել է V դ. Վահան Մամիկոնյանի գլխավորած ապստամբության ընդգրկած «Մարզպանական Հայաստանի» տարածքի մասին, որը և համեմատել է «թագավորական ժամանակաշրջանի Հայաստանին»: Այնուհետև Ն. Ադոնցը վերադառնում է Արշակ Բ-ի անկման շրջանին*[51]*: Հ. Սվազյանը չի շարունակել Ն. Ադոնցի միտքը, որ Արշակի որդու՝ Պապի օրոք այդ հողերը (նաև Գուգարքը, Արցախը, Ուտիքը) «պատմիչի հավաստմամբ կրկին միացվեցին Հայաստանին»: Վերականգնվեց հին սահմանը Կուր գետով, «որ յառաջն էր լեալ յերկրին Հայոց և ընդ երկիրն Վրաց... և ընդ երկիրն Աղուանից»*[52]*: Ն. Ադոնցը գրել է, որ Հայաստանի բաժանումը Արշակի (Գ) և Խոսրովի ժամանակ տեղի ունեցավ՝ 387 թ.*[53]*: Ն. Ադոնցի միտքը՝ «Հայաստանը մնաց մարզպանության սահմաններում», միանշանակ վերաբերում է 428 թ., քանզի նա գրել է. «Արշակունիների անկումից հետո Հայաստանի տարածքային հարաբերակցությունն այդ երկրների (Վիրք, Աղվանք...) հանդեպ զգալիորեն փոխվեց... Մարզպանական ենք կոչում Հայաստանը, քանի որ Արշակունիներից հետո երկրում նստում էր պարսից արքայի մարզպան կոչվող ներկայացուցիչը»: Նա հատուկ նշել է. «Կուրը Աղվանքի կողմից դադարեց սահման լինել, ինչպես դա Արշակունիների օրոք էր»*[54]*: Ըստ Ն. Ադոնցի, Հայաստանում Արշակունիների հարստության անկման և մարզպանության կազմավորման (428 թ.) ժամանակաշրջանում էր տեղի ունեցել «Աղվանից մարզպանության» կազմավորումը:*

*Հ. Սվազյանը գրել է. «Ուտիքի ու Արցախի վրա տարածվում է «Աղուանք» անունը, որպես նույնանուն մարզպանության բաղկացուցիչ մարզեր, իսկ Արաքսը դառնում է սահման Հայաստանի և Աղվանից մարզպանության միջև»*[55]*: Բացարձակապես սխալ աշխարհագրական պատկերացում:*

---

*անունն է (324-337)* (“The Cambridge Medieval History”, vol. IV. Cambridge, 1966, p. 2, 26, 776)*: Այս խնդրում կարևոր են նաև Թեոդոսիոս I-ի (379-395) և նրանից հետո ընկած ժամանակները:*

[49] Н. А д о н ц. *Նշվ. աշխ., էջ 225: Ն. Ադոնցի տեքստի հայերեն թարգմանությունը ճշտել եմ:*

[50] *«Գրախոսություն», էջ 238-239:*

[51] *Ն. Ադոնցը Արշակի անկման տարի նշել է 374 թ. (*Н. А д о н ц. *Նշվ. աշխ., 28): Սակայն Պապի թագավորության տարիները՝ 369-374 թթ. նկատի ունենալով և Արշակի մասին՝ 346-349 թթ. (նույն տեղում, էջ 428) վերջին թիվը տպագրական վրիպակ համարելով, կարելի է ասել, որ Ն. Ադոնցի մոտ խոսքը Արշակ Բ-ի անկման շրջանի (իմա՝ 369 թ.), այլ ոչ թե Հայաստանի բաժանման տարվա մասին է:*

[52] *Փաւստոսի Բիւզանդացւոյ Պատմութիւն Հայոց, Երևան, 1987, էջ 322:* Н. А д о н ц. *Նշվ. աշխ., էջ 225.*

[53] Н. А д о н ц. *Նշվ. աշխ., էջ 28, 226. Պարսից Վռամ IV Կրմանի (388-399) և Բյուզանդիայի կայսր Արկադիոսի (395-408) օրոք Հայոց արքա Վռամշապուհը, թեկուզև հարկ վճարելու գնով, գահակալում էր Հայոց աշխարհում (Մ ո վ ս է ս Խ ո ր ե ն ա ց ի, էջ 324), այսինքն վերականգնվել էր երկրի ամբողջականությունը:*

[54] Н. А д о н ц. *Նշվ. աշխ., էջ 221-223, 230.*

[55] *Հ. Ս վ ա զ յ ա ն. Աղվանից աշխարհի..., էջ 205:*

*Հայաստանի Ուտիք և Արցախ աշխարհներից արևմուտք Սյունյաց աշխարհն է, այնուհետև Նախիջևանը՝ եզերված Արաքսով, որը հարավում Ջուղայի մոտակայքում թեքվում է՝ հասնելով Զանգեզուրի լեռների հարավային ծայրը, հոսում Սյունիքի հարավով դեպի հյուսիս-արևելք, եզերում Արցախը (հարավից) և Փայտակարանը (հյուսիսից), ապա, մերձկասպյան ցածրավայրում Կուրի հետ խառնվելով, թափվում Կասպից ծով:*

*Հ. Սվազյանը համաձայն չէ, որ V դ. Արցախը և Ուտիքի զգալի մասը մարզպանության մեջ չեն եղել, և «Աշխարհացույցի»՝ «զայս ամենայն Աղուանք ունին հանեալ ի Հայոց...» արտահայտությունը հետագա ընդմիջարկության արդյունք է[56]: Սակայն խոստովանելով, որ «Աշխարհացույցի» հեղինակը «Հայաստանից հանված» տարածքների մասին հաղորդելով, «ցավոք, չի հայտնում նշված փոփոխությունների գոնե մոտավոր ժամանակը... «[57], պնդում է. «Սասանյանները... 461 թ. Մեծ Հայքից անջատում են Արցախ և Ուտիք նահանգներն ու միացնում Աղվանից մարզպանությանը»[58]: Այսպիսի թվագրմամբ ևս կրկնելով Կ. Տրևերի կարծիքը[59], նա մնում է իր անհամոզիչ փաստարկումների շրջանակում:*

*Հ. Սվազյանը գրում է, «որ ոչ միայն Խորենացին, այլև վաղմիջնադարյան գրեթե բոլոր հայ հեղինակները «Աղուանք» ասելով հասկացել են Կուրի և Արաքսի միջև ընկած տարածքը, որն է հենց Առանի տիրույթը»[60]: Պատմահոր երկում միայն մի տեղ է «Աղուանքը» հիշատակված՝ Երասխից մինչև Կուր ձգվող աջափնյա դաշտավայրի և դրա լեռնակողմի առումով[61]: Մյուս տեղերում խոսքը ձախափնյա* Աղուանքի *մասին է[62], ինչպես և Ագաթանգեղոսի, Փավստոս Բուզանդի, Կորյունի, Եղիշեի, Ղազար Փարպեցու երկերում (V դ.): Նրանք տարբերակում են երեք երկրները՝ Հայքը, Վիրքը և* Աղուանքը*: Սեբեոսը (VII դ.) Խոսրով Ա Անուշիրվանին (531–579) վերաբերող շարադրանքում հիշատակել է «Պահակն Ճորայ և Աղուանից»: 590 թ. Որմիզդ Դ-ի (579–590) սպանությունից հետո ապստամբ զորավար Վահրամ Չուբինը Մուշեղ Մամիկոնյանին հրովարտակ հղեց՝ օգնության դիմաց խոստանալով հայերին թողնել «զամենայն եր-*

---

[56] *Է. Դ ա ն ի ե լ յ ա ն. նշվ. աշխ., էջ 30, 37: Ըստ գրախոսի, եթե նույն արտահայտությունը կրկնվում է, դա չի կարող ընդմիջարկություն լինել: Սակայն դա կարող էր նույն գրչին պատկանել: Նա նաև զարմանում է («Գրախոսություն», էջ 239-240, ծան. 17), որ «Աշխարհացույցի» հեղինակ նախկինում համարել եմ միայն Շիրակացուն, իսկ այժմ՝ Մովսես Խորենացուն և նրա գործը շարունակող Անանիա Շիրակացուն:*

[57] *Հ. Ս վ ա զ յ ա ն. Աղվանից աշխարհի..., էջ 203:*

[58] *«Գրախոսություն», էջ 244:*

[59] К. Т р е в е р. *Նշվ. աշխ., էջ 225. Հ. Ս վ ա զ յ ա ն. Աղվանից մարզպանության կազմավորման հարցի շուրջը.– ՊԲՀ, 1979, N 4, էջ 210-218:*

[60] *«Գրախոսություն», էջ 237, ծան. 7:*

[61] *Մ ո վ ս է ս Խ ո ր ե ն ա ց ի, էջ 113:*

[62] *Այսպես, «...զբնակիչս Կաւկասու հանդերձ Աղուանիւք և Վրօք», «...ի խաղալ թագաւորին զկողմամբ Աղուանից ի վերայ հիւսիսականացն...», «այլոց ոմանց հանապազաստուտ արանց Աղուանից՝ սպանին զերանելին... ի Վատնեան դաշտին», «...թափէ զնա յարձակմանէ հիւսիսականացն ազգաց, որք միաբանեալ ելին արտաքս քան զկապանն Ճորայ և բանակեցան ի սահմանս Աղուանից», «զՈւռնայր Աղուանից արքայ», «յաղագս դպրութեան Հայոց, Վրաց և Աղուանից», «...ինքն (Մեսրոպ Մաշտոց – Է. Դ.) յԱղուանս իջեալ առ Արսվաղէն թագաւոր նոցա և առ եպիսկոպոսապետն Երեմիայ» (Մ ո վ ս է ս Խ ո ր ե ն ա ց ի, էջ 137, 228, 259-260, 270, 304, 328, 329):*

*կիրն Հայոց մինչև ցԿապկոհ և ցդուռն Աղուանից...»: Իսկ VII դ. կեսերին Մուավիան՝ «իշխանութիւն ետ» Թեոդորոս Ռշտունուն Մեծ Հայքի, Վիրքի և* Աղուանքի *(«մինչև ցԿապկոհ և ցՊահակն Ճորայ») վրա*[63]*:*

*Հայ Առաքելական եկեղեցուն ենթակա* Աղուանից *հայրապետական աթոռը 552 թ. Աբասի (Արցախի Մեծ Առանքի՝ Մեծիրանց գավառի եպիսկոպոս) օրոք (552–596) Կուրի ձախափնյակից տեղափոխվել էր աջափնյակ՝ Պարտավ քաղաքը «վասն հինահալած արշաւանաց թշնամեաց խաչին Քրիստոսի»*[64]*: Հայկական ծագմամբ «Աղուանք» անվանումը ժամանակի ընթացքում եկեղեցա-իրավական բովանդակությամբ*[65] *կիրառվել է աջափնյա*[66] *և ձախափնյա թեմերի առումով, ինչպես երևում է «Պատմութիւն Աղուանից աշխարհի» երկից: «Անուանք հայրապետացն Աղուանից, ամք և գործք նոցին» գլխում հայրապետների ցուցակում*[67] *VI դ. երկրորդ կեսից մինչև X դ. երկրորդ կեսը, ըստ Մովսես Դասխուրանցու, աջափնյա Արցախի և Ուտիքի բազմաթիվ եպիսկո-*

---

[63] *Մ ե ք է ռ ս, էջ 78, 169:*

[64] *Մ ո վ ս է ս Կ ա ղ ա ն կ ա տ ո ւ ա ց ի, էջ 119: «Առ սովաւ կալան սովորութիւն գրել ի պատրուակ թղթի՝ Աղուանից, Լփնաց և Ջորայ կաթողիկոսի: Եւ առ սա գրեցին ի ժողովոյն Դունայ՝ ասել մի բնութիւն աստուածութեան և մարդկութեան, և յաւելուլ ի սուրբ Աստուածդ՝ «անմահ և խաչեցար» (նույն տեղում, էջ 342-343): Ըստ Բ. Ուլուբաբյանի, «Դառնալով Աղվանքի եկեղեցուն, պետք է վերստին հիշել, որ ինչպես Հայոց արևելյան նահանգներում, այնպես էլ բուն Աղվանքում մինչև VI դ. կեսը տիրապետող էր Ամենայն Հայոց կաթողիկոսական գավազանը... Աղվանքի կաթողիկոսության հիմնադրումը համընկնում է Հայոց թվականության սկզբի հետ» (Բ. Ո ւ լ ո ւ բ ա բ յ ա ն. Դրվագներ..., էջ 203-204): Ա. Հակոբյանը նշել է. «VI դ. երկրորդ կեսին վերջնականապես ձևավորվեց Աղվանից եկեղեցին, որը հետևում էր աջափնյա համայնքների եկեղեցական ավանդույթներին, որոնք իրենց ազդեցության ոլորտն էին ներառել Կուրի ձախափնյակը: Այդ եկեղեցին իր էությամբ հայկական էր»* (Ա. Ա կ օ ռ յ ա ն. *Նշվ. աշխ., էջ 142*):

[65] *Հ. Սվազյանի կարծիքով, ըստ Ն. Ադոնցի, «ծայրամասային շրջաններն ունեին վարչա-քաղաքական, այլ ոչ թե եկեղեցական ծագում», «դրանց մեջ անշուշտ տեսնելով և ծայրամասային Ուտիք ու Արցախ նահանգները» («Գրախոսություն», էջ 245): Ն. Ադոնցը, ելնելով «հայ ժողովրդի միջուկի ձևավորման»՝ «փոյուգիացի հայերի» «եկվորության տեսությունից», ծայրամասային գավառաններից «շատերը նախահայկական» ծագման է համարել, գրելով. «Մենք խոսում ենք տերմինների տարածքային բովանդակության մասին «Աշխարհացոյց»-ի իմաստով... այդ շրջանները իրարից սահմանազատվեցին նրանով, որ առնչվում էին տարբեր վարչական միավորների՝ Գուգարքը Վիրքին, Ուտիքը ու Արցախը՝ Ալբանիային, Փայտակարանը և Պարսկահայքը Ատրպատականին...»* (Հ. Ա դ ո ն ց. *Նշվ. աշխ., էջ 230, 398): Սակայն հայ ժողովրդի ծագման մասին «եկվորության տեսությունը» մերժվել է պատմագիտական, հնագիտական և լեզվաբանական ուսումնասիրությունների հիման վրա: Ուստի, այստեղ հիշատակված՝ «ծայրամասային շրջանները»՝ Գուգարքը, Ուտիքը, Արցախը, Փայտակարանը, Պարսկահայքը (Նոր-Շիրական) բնիկ հայկական երկրամասեր են: Ելնելով հայ ժողովրդի Հայկական լեռնաշխարհի տեղաբնիկ ազգ լինելու իրողությունից՝ նկատի եմ ունեցել ծագումով նույնպես հայկական «Աղուանք» անվան տարածումը Հայ Առաքելական եկեղեցու Ուտիքի և Արցախի թեմերում՝ Հայոց Արևելից կողմերում:*

[66] *Ըստ Բ. Ուլուբաբյանի՝ V դ. Արցախ և Ուտիք նահանգների «Աղուանք» «վերանվանման մեջ որոշակի դեր պետք է ունենար մարզի եկեղեցին, որը… նվիրապետական տեսակետից ենթակա էր մնում հայոց լուսավորչական եկեղեցուն» (Բ. Ո ւ լ ո ւ բ ա բ յ ա ն. Դրվագներ..., էջ 131): Ըստ Ա. Հակոբյանի՝ Մովսես Դասխուրանցու դարաշրջանում (X դ.) ձախափնյակում և աջափնյակում «Աղուանք» տերմինի «գոյության միակ հիմքը Աղուանից եկեղեցին էր մնում...» (*Ա. Ա կ օ ռ յ ա ն. *Նշվ. աշխ., էջ 118, 249, 276):*

[67] *Ս. Եղիշայով սկսվող ցուցակում, Ս. Գրիգորիսից (IV դ. 30-ական թվականների սկզբներ) և տ. Երեմիայից (V դ. 10-20-ական թվականներ) բացի՝ մինչև Աբասը հայրապետների անունները, ըստ Ա. Հակոբյանի, առասպելական են (*Ա. Ա կ օ ռ յ ա ն. *Նշվ. աշխ., էջ 277):*

*պոսություններից ընտրվածների անունների կողքին երբեմն շարունակում են հիշատակվել ձախափնյա Շաքեից և Կապաղակից ընտրվածները*[68]*: Ֆ. Մամեդովան, նենգափոխելով փաստերը, գրել է, թե դա «վկայում է» I դարից մինչև VIII դ. սկիզբը «Ալբանիայի տարածքային ամբողջականության, այսինքն՝ ձախափնյա և աջափնյա միասնական Ալբանիայի մասին»*[69]*: Այնինչ խոսքը հայոց Արցախի և Ուտիքի ու ձախափնյա բուն Աղուանքի թեմերի առումով Հայ Առաքելական եկեղեցուն ենթակա «Աղուանից հայրապետության» անվան ոչ էթնիկական բովանդակությամբ VI դ. երկրորդ կեսից ընդհանուր կիրառման մասին է: Միաժամանակ հստակորեն պահպանվում են* Արցախի *և* Ուտիքի *(«Ուտի գավառ առ հեղեղատովն», «ի լեռնակողմ Արցախայ գաւառին», «Արցախական ամուր գաւառացն», «ի գաւառս Արցախայ» և այլն) անունները*[70]*:*

*Հ. Սվազյանը գրել է. «Արդեն VIII դարում աղվանացիներ, որպես նախկին* Աղվանքի *բուն բնակիչներ, այլևս գոյություն չունեին: Զուլվելով եկվոր մահմեդականներին՝ նրանք դուրս են մղվում պատմության ասպարեզից*[71]*... «Աղուանք» հասկացությունը*

---

[68] *Մ ո վ ս է ս Կ ա ղ ա ն կ ա տ ո ւ ա ց ի, էջ 343-347: Յուցակի համառոտ կրկնությունը և շարունակությունը՝ մինչև Ներսեսի ձեռնադրությունը (1235 թ.) տես՝ Կ ի ր ա կ ո ս Գ ա ն ձ ա կ ե ց ի, էջ 192-201:*

[69] *Նույն կեղծարարությամբ Ֆ. Մամեդովան իր գրքում զետեղված քարտեզներում (որոնք նա «ժամանակագրել» է մ. թ. ա. III - մ. թ. VII դդ.) «Ալբանիա» անունը ձախափնյակի հետ միասին «քարտեզագրել» է նաև Կուրի աջափնյակի՝ Արցախի, Ուտիքի, Սյունիքի և Նախիջևանի վրա: Միևնույն ժամանակ հայկական աշխարհագրական անունները (օրինակ՝ Սևան, Բարգուշատ, Արփա, Նախիջևան, Գարդման, Խաչենագետ) աղավաղելով և օգտագործելով թուրքերեն ձևով (*Гекча, Баргюшад, Арпачай, Нахичеванчай, Нахичевань, Гардыман, Дзегамчай, Хачинчай*), սկզբնաղբյուրների հակագիտական և բռնազբոսիկ «մեկնություններով» «եզրակացրել է», թե «այդ շրջանները հայկական չէին, այլ ալբանական...»: Այսպիսի անհեթեթ զառանցանքով Ֆ. Մամեդովան «ալբանական» է «համարել» (*Ф. М а м е д о в а. *Նշվ. աշխ., էջ. 76, 126-127) բնիկ հայկական Արցախը, Ուտիքը, Փայտակարանը, Նախիջևանը՝ Մեծ Հայքի թագավորության արևելյան երկրամասերը:*

[70] *Մ ո վ ս է ս Կ ա ղ ա ն կ ա տ ո ւ ա ց ի, էջ 157, 171: IX-X դդ. մինչև XVI դ. Հայոց արևելից կողմերում Խաչենի իշխանությունն էր (Բ. Ո ւ լ ո ւ բ ա բ յ ա ն. Խաչենի իշխանությունը X-XVI դդ.):*

[71] *Հայ Առաքելական եկեղեցու պատմությունը նենգափոխելով՝ Ֆ. Մամեդովան գրել է՝ «Ալբանիայում» քրիստոնեությունը ավելի շուտ է տարածվել, քան Հայաստանում, իսկ VIII դ. «ալբանական եկեղեցին չկարողացավ դիմակայել Արաբական խալիֆաթի և նրան ակտիվորեն օգնող Հայ եկեղեցու քաղաքականությանը», ինչը հանգեցրեց «ալբանական քրիստոնյա բնակչության իսլամացմանը» (*Ф. М а м е д о в а. *Նշվ. աշխ., էջ 225, 237): Հակառակ այսպիսի կեղծիքի, պատմական իրողությունը այն է, որ Հայ Առաքելական եկեղեցին հաստատվել է I դ. ս. Թադեոս և ս. Բարդուղիմեոս առաքյալների քարոզությամբ (Մ ա ղ ա ք ի ա ա ր ք. Օ ր մ ա ն յ ա ն. Ազգապատում, հ. Ա, Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 2001, էջ 9–26): VIII դ. սկզբին Հայոց կաթողիկոս Եղիա Ա Արճիշեցին (703-717 թթ.), լուր ստանալով Աղուանից կաթողիկոս Ներսեսի քաղկեդոնականությանը հարելու մասին, ժամանում է Պարտավ (Հայոց կաթողիկոսին ուղեկցում էին Սիմեոն՝ Խոռխոռունյաց եպիսկոպոսը, Սարգիս՝ Ամատունյաց եպիսկոպոսը և Սարգիս՝ Ռոստակա եպիսկոպոսը, Յովհաննես վարդապետը և բազում աշակերտներ) և 704 թ. ժողով հրավիրում: Ներսեսը պատժի ենթարկվեց, իսկ ժողովը նոր կաթողիկոս ընտրեց՝ Սիմեոնին, որին Եղիա Ա Արճիշեցին ձեռնադրեց «ի հայրապետութիւն Աղուանից» (Մ ո վ ս է ս Կ ա ղ ա ն կ ա տ ո ւ ա ց ի, էջ 297, 299), «զի առանց հրամանի կաթողիկոսին Հայոց ոչ ձեռնադրեսցեն կաթողիկոս Աղուանից» (Կ ի ր ա կ ո ս Գ ա ն ձ ա կ ե ց ի, էջ 197): Հայոց կաթողիկոս Եղիային ժողովի մասնակիցները («Սիմէոն՝ Աղուանից կաթողիկոս, Յովհաննէս՝ Կապաղակայ եպիսկոպոս, Սիմէոն՝ Հոշոյ եպիսկոպոս, Սահակ՝ Ամարասայ եպիսկոպոս, Սահակ Մեծ Կուենից, եպիսկոպոս և այլ հոգևորականներ ու աշխարհականներ) հանձնեցին «Զեռնարկ... վասն միաբանութեան և ուխտի հաստատութեան Հայոց և Աղուանից» (Մ ո վ ս է ս Կ ա ղ ա ն կ ա տ ո ւ ա ց ի. էջ 298-302): Հետագայում*

*կորցնում է մարզպանության ողջ տարածքն արտահայտող նախկին ընդարձակ իմաստը և տարածքային առումով սկսում է գործածելի դառնալ միայն նրա հարավային մարզերի՝ Ուտիքի և Արցախի համար»*[72]*:*

*Ղևոնդի մի հաղորդման Հ. Սվազյանի սխալ ընկալումը չի նպաստել նրա ճիշտ պատկերացմանը ձախափնյա* Աղուանքի *մասին VIII դ. առումով:*

*Մանսուր խալիֆան (754–775) ցուցում էր տվել Եզիդ իբն Ուսայդ ոստիկանին (759–769)*[73] *ամուսնանալ խաքանի դստեր (ըստ Ղևոնդի՝ քրոջ)՝ Խաթունի հետ՝ կանխելու խազարների ներխուժումները Հայք, Վիրք և մերձկասպյան շրջաններ*[74]*: Սակայն Խաթունի մահը խազարների ներխուժումների պատճառ եղավ՝ 762 և 764 թթ.*[75]*: Նրանց զորքերը «սփռեալ զասպատակս իւրեանց ըստ հիւսիսոյ գետոյն հզօրագունի որ կոչի Կուր՝ առնուին բազում գաւառս, զՀէջար, զՔաղա, զՈստանի, զՄարզպանեան, զՀաբանդ, զԳեղաւու, զՇաքէ, զԲեխ, զԽենի, զԿամբեճան, զԽողմաղ: Այս գաւառք աշխարհին Աղուանից»*[76]*: Իսկ Հ. Սվազյանը Եզիդ ոստիկանի հետ կապված դեպքերը տեղափոխելով Եզիդ Ա խալիֆայի (680–683) ժամանակները, խառնելով պատմական դեպքերն ու դեմքերը, գրել է.»Եզիդ Ա-ն խաղաղության դաշն է կնքում խազարների հետ և որպես հաշտության գրավական ամուսնանում է խազարաց խաքանի քրոջ՝ Խաթունի հետ... Սակայն վերջինիս անժամանակ մահը... նոր արշավանքի դուռ է բացում: Նրանք նախ գրավում են Կուրի ձախափնյա տարածությունը*[77] *... Իրենց խաքանի՝ Ալփ-Իլիթվերի գլխավորությամբ անցնում են Կուրը և սկսում ասպատակությունները նրա աջափնյակում*[78] *... Հարձակման զոհ է դառնում հայոց իշխան Գրիգոր Մամիկոնյանը»*[79]*: Այսինքն՝ Հ. Սվազյանը խազարների 764 թ. ներխուժումը ներկայացրել է որպես 685 թ. արշավանք, որը տեղի էր ունեցել Աբդ ալ-Մալիք խալիֆայի (685–705) օրոք*[80]*: Հ. Սվազյանը իր գրքում տիրող նման խառնաշփոթի*

---

*Հայ Առաքելական եկեղեցու առաջնորդությամբ Աղուանից կաթողիկոսության (XIII դ. երկրորդ կեսից՝ Գանձասարի կաթողիկոսության) աջափնյա և ձախափնյա թեմերի կյանքը, թեկուզ ծանր պայմաններում, շարունակվում էր (Է. Դ ա ն ի ե լ յ ա ն. նշվ. աշխ., էջ 14-27, 46-56): Իսկ ձախափնյակի քրիստոնեական բնակչությանը առավել ծանր հարված հասցրեցին Հայաստանը և հարևան երկրները XIV դ. վերջին և XV դ. սկզբին դաժանորեն ասպատակած Լանկթամուրի ավերիչ արշավանքները:*

[72] *Հ. Ս վ ա զ յ ա ն. Աղվանից աշխարհի..., էջ 221: Բնիկ հայկական Ուտիքը և Արցախը նաև պատմաաշխարհագրական տեսակետից Հ. Սվազյանը սխալ է բնութագրել, դրանք նշելով որպես «նախկին Աղվանից մարզպանության հարավային մարզեր»:*

[73] *Սա նրա երկրորդ պաշտոնավարության ժամանակն էր (Հայ ժողովրդի պատմություն, հ. Բ, էջ 338):*

[74] А. Т е р - Г е в о н д я н. Армения и арабский халифат. Ереван, 1977, с. 101.

[75] *Նույն տեղում, էջ 102. Ղ ևոնդ. Պատմություն, թարգմ., ներած. և ծան. Ա. Տեր-Ղևոնդյանի, Երևան, 1982, էջ 162, ծան. 120 (այսուհետև՝ Ղ ևոնդ, 1982):*

[76] *Պատմութիւն Ղեւոնդեայ մեծի վարդապետի Հայոց (այսուհետև՝ Ղ ևոնդ), Ս. Պետերբուրգ, 1887, էջ 132:*

[77] *«...ասպատակ սփռեալ յաշխարհին Աղուանից՝ առ ստորոտով մեծ լերինն Կաւկասունյաւանս Կապաղակայ գաւառին» (Մ ովսէս Կ ա ղ ա ն կ ա տ ո ւ - ա ց ի, էջ 232):*

[78] *«...անցանէր յՈւտի գաւառ ընդ գետն Կուր» (նույն տեղում):*

[79] *Հ. Ս վ ա զ յ ա ն. Աղվանից աշխարհի..., էջ 251:*

[80] *Ղ ևոնդ, էջ 14-15: Հ. Սվազյանը հաշվի չի առել խազարների՝ 685 թ. և 764 թ. ասպատակությունները հստակորեն տարբերակող Ա. Տեր-Ղևոնդյանի կարծիքը (*А. Т е р - Г е в о н д я н. *Նշվ. աշխ., էջ 51, 101), որը հստակ է նաև պատմաաշխարհագրական տեսանկյունից: Ա. Տեր-Ղևոնդյանը նշել*

*հետևանքով*[81] *ճիշտ եզրահանգման չի եկել խնդրո առարկա ժամանակաշրջանի ձախափնյա* Աղուանքի *աշխարհագրության մասին*[82] *և «Աղվանք» անվանումը քարտեզագրել է միայն աջափնյակի վրա*[83]*:*

*Հայկական ծագում ունեցող «Աղուանք» անունը սկզբնապես կիրառվել է Կուրի հովտի աջափնյա դաշտավայրի առումով: Հետագայում այն տարածվել էր անտիկ աղբյուրներից հայտնի «Ալբանիա» աշխարհագրական անվանաձևով ձախափնյա բազմացեղ միջավայրի վրա և այդ տարածքի առումով «Ալբանիա» անվանումը ստացել այդպիսի բովանդակություն: Այս տեսակետից Հ. Սվազյանը գրել է. «Կուրը Աղվանքի համար ինչպես քաղաքական, այնպես էլ էթնիկական սահման էր»*[84]*:*

*Հայկական միջնադարյան սկզբնաղբյուրներում Հայոց Արևելից կողմանց առումով, սկզբնական՝ ոչ էթնիկական իմաստով, «Աղուանք» անվան հետագա հիշատակումը դիտարկելով որպես «Հայոց Աղուանք» և գրելով այդ մասին, հայագետ պատմաբաններից ոչ մեկը (բացի Ռ. Հյուսենից և Հ. Սվազյանից) չի քարտեզագրել*[85]*, այլ Կուրի աջափնյակում շարունակել է կիրառել Արցախ և Ուտիք անվանումները: Այդպես է Մ. Չամչյանի, Ս. Երեմյանի, Բ. Ուլուբաբյանի, Ա. Տեր-Ղևոնդյանի, Շ. Մկրտչյանի, Ա. Հակոբյանի, Բ. Հարությունյանի աշխատությունների քարտեզներում*[86]*:*

*Հ. Սվազյանը, քարտեզագրելով «Աղվանք» անունը Ուտիք և Արցախ անունների հետ Կուրի աջափնյակում, ուշադրություն չի դարձրել, որ Մ. Չամչյանը, գրելով «Աղուանք Հայոց»-ի մասին, իր «Պատմութիւն Հայոց»-ի Գ գրքի «Գաւառք Հայաստան աշխարհի» քարտեզում «Աղուանք» անունը չի քարտեզագրել թե՛ բնիկ հայոց Արցախ,*

---

*է, որ, ըստ Ղևոնդի, խազարների զորքը 764 թ. ասպատակեց բուն Աղվանքը (Ղ ևոնդ, 1982, էջ 162, ծան. 120):*

[81] *Հ. Սվազյան. Աղվանից աշխարհի..., էջ 249-251:*

[82] *Ղևոնդը նաև գրել է, որ «... յերկիրն Աղուանից ի դրունս Կասպից ի Դարբանդն»: Հարուն ալ-Ռաշիդ խալիֆան (786-809) իր եղբորը տվեց «...զՀայս հանդերձ Վրօք և Աղուանիւք» (Ղևոնդ, էջ 160, 166), այսինքն՝* Արմինիան, *«որը հայկական աղբյուրներում կոչվում է Հայաստան (Հայք)» (Ղևոնդ, 1982, էջ 169, ծան. 145): Ըստ Մատթեոս Ուռհայեցու (XI դ. երկրորդ կես - 1138/44 թթ.), «Էին և այլ թագաւորք Հայոց ի Դարբանդ աշխարհին, որ ասի Կապանք, սահմանակից Օգաց և Աղուանից» (Մատթէոս Ուռհայեցի. Ժամանակագրութիւն, Վաղարշապատ, 1898, էջ 231, հմմտ. Ս. Բարխուդարյան. Դերբենդի հայ-աղվանական թագավորությունը.– ՊԲՀ, N 3, 1969, էջ 125-148), որը վկայում է հայոց քաղաքական և մշակութային ազդեցության ոլորտների՝ Կասպից ծովի արևմտյան ափամերձ շրջաններ հասնելու մասին:*

[83] *Հ. Սվազյան. Աղվանից աշխարհի..., էջ 294:*

[84] *Նույն տեղում, էջ 124:*

[85] *Ռ. Հյուսենի կողմից "Ալբանիան* (Albania)*" աջափնյակում՝ Արցախում և Կուրի ձախափնյակում* (R. H. Hewsen. Armenia: A Historical Atlas, Chicago and London, 2001, p. 77, 88, 92, 98-99)*, ինչպես նաև Հ. Սվազյանի կողմից «Աղվանք» երկրանվան Կուրի աջափնյակում՝ Արցախի և Ուտիքի տարածքում քարտեզագրումը հակասում է քարտեզագրության կանոններին (Է. Լ. Դանիելյան. Հայոց պատմության հիմնահարցերի խեղաթյուրման վտանգը.– «Լրաբեր», 2007, N 3, էջ 219-220), քանի որ այստեղ միակ երկրանունն է* Հայաստանը/ Մեծ Հայքը *իր Արցախ և Ուտիք աշխարհներով:*

[86] *Տես՝ Ս. Երեմյան. նշվ. աշխ.:* Ա. Տեր-Գևոնդյան. *Նշվ. աշխ.,: Բ. Ուլուբաբյան, Դրվագներ...:* Ա. Ակոպյան. *Նշվ. աշխ., Շ. Մկրտչյան. Լեռնային Ղարաբաղի պատմաճարտարապետական հուշարձանները, Երևան, 1985, Բ. Հարությունյան. Հայոց Արևելից կողմերի վարչական բաժանումը ըստ «Աշխարհացույցի».– Շուշին Հայոց քաղաքակրթության օրրան» գիտաժողովի նյութեր:*

*Ուտիք և Փայտակարան նահանգների տեղում և թե՛ Կուրի ձախափնյա այն շրջանում («յայնկոյս Կուր գետոյ»), որը հասնում էր մինչև իր նշած «Աղուանք Շիրուանայ» արևմտյան սահմանը:*

*Հայ պատմիչներ Մովսես Կաղանկատվացու (VII դ.) և Մովսես Դասխուրանցու «Պատմութիւն Աղուանից աշխարհի»[87] ու հետագա դարերի հայ պատմիչների երկերում հայկական ծագմամբ «Աղուանք» անվան հիշատակությունները[88] Կուրի նաև աջափնյա հայկական երկրամասերի՝ Արցախի և Ուտիքի առումով եկեղեցական աշխարհագրության, այլ ոչ թե էթնիկական բնույթի են:*

*Կուրի ձախափնյա շրջաններում հետագայում տարբեր անուններով վարչաքաղաքական միավորների առաջացմամբ «Աղուանից» անունը շարունակել է հիշատակվել ընդհանուր եկեղեցական իմաստով՝ Հայ Առաքելական եկեղեցու հովանու ներքո Գանձասարի կաթողիկոսության հայկական աջափնյա և ձախափնյա թեմերի ընդգրկումով, ինչը նկատի է ունեցել Մ. Չամչյանը՝ այդ տարածքներն* Աղուանք Հայոց *անվանելով:*

*XIII դ. երկրորդ կեսից Հայ Առաքելական եկեղեցու նվիրապետական ենթակայության «Աղուանից» հայրապետության հայկական աջափնյա և ձախափնյա թեմերի կենտրոնն էր դարձել Գանձասարի կաթողիկոսությունը, որի ազդեցությունը, դուրս գալով «Աղուանից» կաթողիկոսության սահմաններից, տարածվել էր արևելք: Սարայ-Բաթու քաղաքում 1319 թ. ընդօրինակված Ավետարանի հիշատակարանում գրիչ Խաչատուր քահանան նշել է. «Յամս աստուածապատիւ եւ հոգեւոր տեառն Ստեփանոսի՝ Արեւելեան կաթողիկոսի Հայոց, եւ տեառն Կոստանդեա՝ Կիլիկեցւոյ կաթողիկոսի, եւ ի թագաւորութեանն Հայոց Աւշնի»[89]: Արևելյան կաթողիկոս Հայոց Ստեփանոս Դ-ը (1262–1323) և Ամենայն Հայոց կաթողիկոս Կոստանդին Գ Կեսարացին (1307–1322) ժամանակակից էին Կիլիկիայի Հայոց թագավոր «Աւշինին» (Օշին) (1308–1320): Ըստ Լևոն Խաչիկյանի՝ Խաչատուր քահանան վկայել է, որ Ոսկե Հորդայի հայկական գաղթավայրերը մտել են Գանձասարի թեմի մեջ, որի կաթողիկոսները հայտնի են եղել որպես «Արեւելեան Հայոց կաթողիկոսներ»[90]:*

*Հայոց Արևելից կողմերի Գանձասարի կաթողիկոսությանը ենթակա ձախափնյա թեմերի քրիստոնյա բնակիչները՝ «որպէս իմանամք ի գրոց եւ ի լրոց, բնիկ աղուանքն վարեցեալք են ի Ղանդահար (Աֆղանստանում –Է. Դ.) ի պղծոյն Լանկթամուրայ (XIV դ. վերջ – XV դ. սկիզբ), որք այժմ կան անդ տաճկական հաւատով զորոց բազումք վկայեն թէ՝ ունին տակաւին յարարողութիւնս իւրեանց զոմանս նշանս Քրիստոնէական, զի առնեն ի վերայ խմորոյ զԽաչ… Իսկ բազմութիւնք հայալեզու եւ հայակրօն ժողովր-*

---

[87] *Ա. Մ ն ա ց ա կ ա ն յ ա ն. Աղվանից աշխարհի գրականության հարցի շուրջը, Երևան, 1966, էջ 153–154, Մ ո վ ս է ս Կ ա ղ ա ն կ ա տ ո ւ ա ց ի, էջ ԺԵ–ԺԸ:*

[88] *Օրինակ՝ Մատթէոս Ուռհայեցին հիշատակել է. «աշխարհ Աղուանից, որ ասի Խորին աշխարհ Հայոց» (Մ ա տ թ է ո ս Ո ւ ռ հ ա յ ե ց ի, էջ 231): Ստ. Օրբելյանը (XIII դ. երկրորդ կես – 1303 թ.) նույնպես թեմական բաժանումն է նկատի ունեցել, գրելով Հայոց կաթողիկոս Սարգիս Ա Սևանցու (992-1019) օրոք Սյունյաց թեմի արևելյան սահմանի մասին (Ս տ. Օ ր բ է լ ե ա ն, էջ 227-228):*

[89] *ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, կազմեց Լ. Խաչիկյանը, Երևան, 1950, էջ 155-156:*

[90] *Լ. Խ ա չ ի կ յ ա ն. Հայերը հին Մոսկվայում և Մոսկվա տանող ճանապարհի վրա.– «Բանբեր Մատենադարանի», 1980, № 13, էջ 13:*

*դոցն որք այժմ գոն ի յերկիրն Աղուանից, հայք են ի բնէ: Բայց վասն վրդովմանց եւ աւերմանց Հայաստան երկրացս, ցան եւ ցիր եղեալ ի տեղեաց իւրեանց անդ են ժողովեցեալք, որպէս եւ այժմ բազումք երթան… զայն վիճակսն որոց այժմ տիրեն կաթուղիկոսքն Աղուանից, մեր են ի բնէ, բայց վասն շինութեան Աթոռոյն Գանձասարայ, ի սէր սրբոյն Գրիգորիսի, շնորհեալ են նոցա կաթուղիկոսունքն մեր»[91]:*

*Հայ Առաքելական եկեղեցու նվիրապետության մեջ Գանձասարի կաթողիկոսության[92] բարձրացմամբ և գործունեությամբ՝ Կուրի աջափնյա հայկական՝ Արցախի և Ուտիքի միջավայրին բնորոշ մշակութային արժեքների և ժողովրդագրական երևույթների փոխանցումով ձախափնյա թեմեր, թեկուզ և քաղաքականապես ծանր պայմաններում, մեծացավ հայերի տեսակարար կշիռը այդ շրջանների մշակութային և տնտեսական կյանքում, ինչով և պայմանավորված էր հնուց և վաղ միջնադարից եկող հայոց մշակութակերտ ազդեցության շարունակականությունը այդտեղ: Շամախիում հայկական ուժերի զինվորագրվելու փաստը[93] Մայր հայրենիքի հետ որդիաբար կապված լինելու և նրա փրկության գործին ծառայելու պատրաստակամության վառ վկայությունն է:*

*Հ. Սվազյանը, խեղաթյուրելով նաև «մարզպանությունների» տարածքային խնդիրը, գրել է. «Բայց մի՞թե Սասանյանները չէին Հարավային Կովկասի իրենց հպատակ երկրներում՝ նախ Մեծ Հայքում, ապա Աղվանքում և քիչ ավելի ուշ նաև Վիրքում, մարզպանություններ կազմավորում, որը, հայտնի է, ընթանում էր տարածքային ձևափոխություններով»[94]:*

*Հայկական լեռնաշխարհի ոչ մի հատված անտիկ[95] և հայկական աղբյուրներում չի հիշատակվել Կուրից և Ռիոնից հյուսիս և արևելք՝ Սև ծովից մինչև Կասպից ծով ձգվող լեռները ֆիզիկաաշխարհագրական «Կովկաս» հասկացությունը ընդգրկող որևէ միավորի (Հյուսիսային, Կենտրոնական կամ Մեծ, Հարավային, Արևելյան և*

---

[91] *Դիւան Հայոց պատմութեան, գիրք Գ, մասն երկրորդ, Սիմէոն կաթուղիկոսի յիշատակարանը, 1763-1767 (բնագիրը), Թիֆլիս, 1894 էջ 418) (Է. Դ ա ն ի ե լ յ ա ն. Գանձասարի պատմություն, էջ 142, 270): Ինչպես նշել է Մ ա ղ ա ք ի ա ա ր ք. Օ ր մ ա ն յ ա ն ը, «Աղուանից կաթողիկոսութիւնն ալ, Ամենայն Հայոց հայրապետութեան թեմ մը կամ վիճակ մը կը նկատուէր» (Մաղաքիա արք. Օրմանյան, Ազգապատում, հ. Բ, Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 2001, էջ 3697):*

[92] *1815 թ. նա մետրապոլտության վերածվեց: Ռուսական կայսրության նվաճված սահմաններում մինչև 1830-ական թվականների սկզբները «Աղուանից երկիրն, վերածուելով 2 առաջնորդական թեմի և մի յաջորդական վիճակի, միանում է Հայոց կաթուղիկոսութեան հետ: Բերդաձոր, Դիզակ, Վարանդայ, Խաչեն, Ջրաբերդ և Կիլստան, Լանքարան, Շաքի քաղաք իւր Կապաղակ, Հողի (Խողմաղ – Է. Դ.), Խենի, Կապիճան (այժմ՝ Ճառ) եւ Արաշ գաւառներով միասին Շուշու կամ Արցախի թեմ: Իսկ երկրորդ՝ առաջնորդանիստն Շամախի քաղաքն է, որի թեմ համարուած է Դարբանդն, Դուբան, Բագուն իւրեանց գիւղերով եւ Շամախու գիւղերովն եւ Սալեանն: Յաջորդանիստն է Գանձակ քաղաքն... « (Մ ա կ ա ր ե պ ի ս. Բ ա ր խ ո ւ տ ա ր ե ա ն ց. Պատմութիւն Աղուանից, հ. Բ, 1907, Թիֆլիս, էջ 169):*

[93] *Ռաֆֆին գրել է. «… Իրենց հայրենիքի փրկության գործը առաջ տանելու համար, հայտնեց Օրին (1701 թ. Պետրոս I Մեծ կայսրին – Է. Դ.), հայերը արդեն պատրաստած ունեն Շամախու կողմերում 17 հազար զինվոր, Ղարաբաղում 60 հազար, իսկ Հայաստանի պարսկական 17 նահանգներից կարելի է հավաքել ավելի քան 100 հազար հոգի… « (Ռ ա ֆ ֆ ի. Խամսայի մելիքությունները, Երկերի ժողովածու, հ. 9, Երևան, 1987, էջ 430–431):*

[94] *«Գրախոսություն», էջ 240:*

[95] S t r a b o, XI, II, 1, 14, 15; III, 2, v, 1, 5, 6 *և այլն.*

*Արևմտյան Կովկաս) մեջ: Հ. Սվազյանը Մեծ Հայքը,* Աղվանքը *և Վիրքը խցկել-տեղավորել է «Հարավային Կովկաս» արհեստածին հասկացության մեջ, որն օտար քաղաքական մարմինները կիրառում են ներկայիս հանրապետություններից (Հայաստանի Հանրապետություն, Վրաստանի Հանրապետություն և Ադրբեջանի Հանրապետություն) տարածաշրջանային մեկ միավոր ստեղծելու նպատակով*[96]*: Ընդ որում, այդ երեք հանրապետություններից վերջինը, բացի XX դարի մի քանի տասնամյակներից, այլ դարաշրջանները ընդգրկող պատմություն չունի: Ադրբեջանի Հանրապետությունը իրեն հայտարարելով դեռևս 1918 թ. պանթուրքիստական նպատակներով Իրանական Ադրբեջանի անունը կողոպտած նախախորհրդային «Ադրբեջանական Հանրապետության» ժառանգորդը, իր վայ պատմաբանների միջոցով, շարունակում է խորհրդային ժամանակաշրջանից սկսված «սեփական պատմության» մոգոնումը, իրական պատմական փաստերի նենգափոխման և խեղաթյուրման միջոցով:*

*Իսկ Մեծ Հայքի զգալի մասը կազմող «Մարզպանական Հայաստանը»*[97] *մի քանի անգամ գերազանցում էր Հ. Սվազյանի նշած «Հարավային Կովկասի» մասնաբաժնին:*

*Այսպիսով՝ Հ. Սվազյանի աշխատություններում տեղ գտած պատմաաշխարհագրական և պատմական փաստերի աղավաղումները չեն նպաստել ո՛չ նրա հայեցակարգի հստակեցմանը, ո՛չ էլ գրախոսության անաչառությանը, ուստի մինչև «Գանձասարի պատմություն» գիրքը գրախոսելը նա պարտավոր էր բարեխղճորեն ծանոթանալ թե՛ գրքի բովանդակությանը, թե՛ սկզբնաղբյուրներին:*

## НЕСОСТОЯТЕЛЬНОСТЬ “НОВЕЙШЕЙ КРИТИКИ” СИСАК-АРАНСКОЙ ВЕТВИ ПРЕДАНИЯ МОВСЕСА ХОРЕНАЦИ

*ЭДУАРД ДАНИЕЛЯН*

Р е з ю м е

Казалось, “гиперкритика” “Истории Армении” Мовсеса Хоренаци (V в.) себя уже исчерпала, но в последнее время вновь делается попытка оторвать Сисак-Аранскую ветвь от древнего Гайкянского предания и представить ее как “сочиненную” Хоренаци в конце V в. – нач. VI в. Сог-

[96] *Հայկական լեռնաշխարհի ամբողջական պատկերը քաղաքականացված հակագիտական հրապարակումներում խեղաթյուրված է ներկայացվում: Մի կողմից՝ համաշխարհայնացման ընթացքում լեռնաշխարհի հյուսիսարևելյան մասը մտցվում է «Հարավային Կովկասի» մեջ (նախկին՝ նույնպես արհեստածին «Անդրկովկասի» փոխարեն, որը սակայն դեռևս Ռուսական կայսրության ժամանակ վարչաաշխարհագրական իմաստ ուներ՝ «Կովկասից այն կողմ», ինչը պահպանվեց նաև հետագայում: Իսկ 1990-ական թվականներից Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի հանրապետությունների նկատմամբ օտարների կողմից կիրառվեց «Հարավային Կովկաս» տերմինը, որը աշխարհագրական իմաստով նույնական չէ «Անդրկովկաս»-ին, այլ, քաղաքականացվելով, նշանակում է «Կովկասի» հարավային մաս:*

*Մյուս կողմից՝ թուրք և նրանց համախոհ կեղծարարները Հայկական լեռնաշխարհի արևմտյան մասը՝ Արևմտյան Հայաստանը «վերանվանել» են «Արևելյան Անատոլիա» (այնինչ «Անատոլիան» Հայկական լեռնաշխարհից արևմուտք է՝ Փոքր Ասիայում):*

[97] *Հայ ժողովրդի պատմություն, հ. Բ, էջ 165-215:*

ласно же родословной Гайкян, армяне – автохтоны Армянского нагорья, органической частью которого являются области Великой Армении – Арцах и Утик. Армянское правобережье долины Куры и ее обращенная к горам сторона, с армянским описательным названием *Алуанк* (“алу” – “приятный”, эпитет Сисака), были владением Гайкян - Сисакян Арана. Название *Алуанк* распространилось на левобережье (“Албания” античных авторов) Куры. Политическое влияние армянской государственности на левобережье в течение веков сопровождалось сильным воздействием армянской культуры. Применение в армянских средневековых источниках названия *Алуанк* относительно правобережья – Арцаха и Утика носило не этнический или административно-политический, а церковный характер. Согласно М. Чамчяну, “Армянский Алуанк” состоял из правобережных областей, а также части левобережья, т.е. включал армянские правобережные и левобережные епархии “Алуанского патриаршества” (со второй половины XIII в. – Гандзасарский католикосат) в иерархии Армянской Апостольской Церкви.

## THE FAILURE OF “MODERN CRITIQUE” OF THE SISAK-ARAN BRANCH OF MOVSES KHORENATSI’S TRADITION

*EDWARD DANIELYAN*

S u m m a r y

It seemed that “hypercriticism” of “History of Armenia” of Movses Khorenatsi (5th c.) exhausted itself, however, recently, an attempt was made to tear away the Sisak–Aran branch from the ancient Haikyan tradition and present it as “invented” by Khorenatsi at the end of the 5th c.– beginning of the 6th c. Meanwhile, according to the Haikyan genealogy, the Armenians are the natives of the Armenian Highland, the organic parts of which are the regions of Great Armenia – Artsakh and Utik. The Armenian right-bank valley of the Kur and its side facing the mountains with an Armenian descriptive name *Aluank* (“alu” – “pleasant”, Sisak’s epithet) were in possession of Haikyan - Sisakyan Aran. The name *Aluank* extended to the left bank (“Albania” of the antique authors) of the Kur. Political influence of the Armenian statehood on the left bank during centuries was accompanied by strong impact of Armenian culture. Application of the name of “Aluank” in Armenian medieval sources with regard to the right bank – Artsakh and Utik was not of ethnic or political-administrative, but of ecclesiastical character. According to M.Chamchyan, “Armenian Aluank” consisted of the right-bank regions, as well as a part of the left bank, i.e. it included the Armenian right-bank and left-bank eparchies of “the Aluank Patriarchate” (since the second half of the 13th c. – the Gandzasar Catholicate) in the hierarchy of the Armenian Apostolic Church.